


ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱԿ-ի ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ.

ձեռնարկ փառաբացիական
հասարակության համար



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....	3
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ԿՐՃԱՏ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ԲԱԺԻՆ 1. ՄԱԿ-Ի ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ	11
1. Մարդու իրավունքների հարցերով զերագույն հանձնակատարի գրասենյակ.....	11
2. Մարդու իրավունքների խորհուրդ.....	12
3. Համընդհանուր պարբերական դիտարկում (ՀՊԴ)	14
4. ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերը.....	15
ՄԱԿ-ի մարդու իրավունքների պայմանագրային մարմինները.....	17
1. Մարդու իրավունքների կոմիտե 17	
2. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե	25
3. Ռասայական խտրականության դեմ պայքարի կոմիտե.....	31
4. Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե	37
5. Խոշտանգումների դեմ պայքարի կոմիտե	43
6. Երեխայի իրավունքների հարցերով կոմիտե.....	48
7. Միգրանտ աշխատողների իրավունքների կոմիտե.....	54
8. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով կոմիտե	56
9. Բռնությամբ անհետացման հարցերով կոմիտե	60
10. Խոշտանգումների կանխարգելման հարցերով ենթակոմիտե	63
ԲԱԺԻՆ 2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱԿ-Ի ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ	66
1. Տնտեսական և սոցիալական խորհրդում խորհրդատվական կարգավիճակը, նշանակությունը, կարգավիճակ ձեռք բերելու ընթացակարգը:	67
2. Համընդհանուր պարբերական դիտարկման փուլերը և քաղաքացիական հասարակության մասնակցության ձևաչափը.....	70
3. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների կողմից պարբերական դիտարկումների գործընթացին:	80
4. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների կողմից Ընդհանուր մեկնաբանությունների ընդունման գործընթացին	87
5. Քաղաքացիական հասարակությունը և անհատական բողոքների ներկայացումը	88

6. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերի գործունեության շրջանակներում	96
ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ	98

Այս ձեռնարկը մշակվել է Հայաստանի քաղաքացիական հասարակությանը, ուսանողներին, ակտիվիստներին, երիտասարդ մասնագետներին և հասարակ քաղաքացիներին ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգի աշխատանքին ծանոթացնելու նպատակով:

Վերջին տարիներին ՄԱԿ-ն ընդլայնել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների մեխանիզմներն՝ ընդգրկելով պայմանագրային մարմինները, որոնք դիտարկում են անդամ պետությունների կողմից ՄԱԿ-ի մարդու իրավունքների իննը հիմնարար կոնվենցիաները, հատուկ ընթացակարգերը, որոնք ուսուսասիրում են անդամ պետություններում մարդու իրավիճակների կոնկրետ ասպեկտները, որոնք առաջացնում են միջազգային հանրության մտահոգությունը և համընդհանուր պարբերական դիտարկումը (ՀՊԴ), որը գործընթաց է, որի միջոցով ուսուսասիրվում է Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամ պետությունների կողմից մարդու իրավունքների իրականացումը:

Քաղաքացիական հասարակությունը կենսական դեր է խաղում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների պաշտպանության ճարտարապետության գործում: Ոչ միայն պայմանագրային մարմինների ու հատուկ ընթացակարգերի փորձագետներից շատերը քաղաքացիական հասարակության ակտիվիստներ են, բայց նաև քաղաքացիական հասարակությունն ունի առանցքային դեր ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմներին տեղեկատվության տրամադրաման, ինչպես նաև միջազգային հանրության ուշադրությունը մարդու իրավունքների հրատապ հիմնախնդիրների վրա հրավիրելու հարցում:



Քաղաքացիական հասարակությունն ունի հասարակ մարդկանց, այդ թվում՝ խոցելի խմբերի հետ ամենասերտ շփման և, հաճախ, մարդու իրավունքների խախտման և մարդու իրավունքների վտանգների մասին առաջին ձեռքի տեղեկատվություն ստանալու հնարավորություն: Այս ձեռնարկի նպատակն է բարձրացնել Հայաստանում քաղաքացիական հասարակության դերակատարների գիտելիքն առ այն, թե ինչպես նրանք կարող են ներգրավվել ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգի աշխատանքներում և մարդու իրավունքների տարբեր մեխանիզմներին հետ աշխատանքի համապատասխան մեթոդների մասին:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԱԿ-ի ՄԻԳՀԳ) հույս ունի, որ այս ձեռնարկը կաջակցի ՄԻԳՀԳ-ի ֆինանսավորմամբ իրականացվող դասընթացի մասնակցիներին ՄԱԿ-ի մարդու իրավունքների աշխատանքում ներգրավվման հարցում:

Վլադիմիր Շկոլնիկով
ՄԱԿ-ի ՄԻԳՀԳ-ի Հարավային Կովկասի համար
մարդու իրավունքների հարցերով ավագ խորհրդական

Հայաստանը, լինելով ՄԱԿ-ի անդամ, մի շարք պարտավորություններ է վերցրել իր վրա, այդ թվում՝ մարդու իրավունքների խթանման ու պաշտպանության ոլորտում: ՄԱԿ-ի հիմնական դերերից է խրախուսել ու քաջալերել մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանությունը պետություններում: Այդ նպատակին են ծառայում ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմները:

Հայաստանում մարդիկ հաճախ չգիտեն և/կամ կասկածի տակ են դնում միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ՄԱԿ-ի դերն ու նշանակությունը: Մինչդեռ, մարդու իրավունքների ոլորտում Հայաստանի պետական քաղաքականությունը, օրենսդրության ու դրա կիրառման բարեփոխումները կառուցվում են մեծամասամբ միջազգային կազմակերպությունների՝ ներառյալ ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմների նկատմամբ Հայաստանի ստանձնած պարտավորությունների շուրջ:

Շատերը, այդ թվում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ), չեն գիտակցում, որ Հայաստանի անդամակցությունը ՄԱԿ-ին նշանակում է եզակի հնարավորություն այդ միջազգային հարթակում բարձրաձայնել մարդու իրավունքների ոլորտում հրատապ խնդիրները, օգտագործել այն Հայաստանում դրական փոփոխությունների հասնելու համար: Քաղաքացիական հասարակությունը կարող է ակտիվորեն մասնակցել ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմների աշխատանքին տարբեր ձևերով ու փուլերում:



Տվյալ ձեռնարկը մշակվել է նրանց այդ հարցում տեսական ու գործնական ուղղություն ցույց տալու նպատակով. լայնորեն օգտագործվել են նաև տեղական լավագույն փորձն ու օրինակները:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամա (ԵՀՀ) ունի ոչ ֆորմալ կրթության կազմակերպման երկարամյա փորձ: Տարիներ շարունակ մեր առանցքային գործողություններից է Կոնֆլիկտների տրանսֆորմացիայի ու Քաղաքացիական հասարակության զարգացման (ԴեՊո) դպրոցների կազմակերպումը:

Ֆորմալ կրթությունը կարևոր է, սակայն շարունակական կրթման շղթան դարձել է ժամանակակից մարդու գործունեության անքակտելի բաղադրիչ. գլոբալ փոփոխություններն ու մարտահրավերներն անհրաժեշտ են դարձնում պարբերաբար ընթացիկ և նորարար գիտելիքների ստացումը, թարմացումը և վերաիմաստավորումը:

Սույն ձեռնարկը ևս մեկ գործիք է, որի միջոցով ԵՀՀ-ն և, հուսով եմ, կրթության ոլորտի այլ մասնագետներ հանրության լայն շրջանում կտարածեն մարդու իրավունքների խրախուսման վերաբերյալ տեղեկատվություն, գիտելիքներ և հմտություններ:

Գևորգ Տեր-Գաբրիելյան
ԵՀՀ Գլխավոր տնօրեն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ԿՐՃԱՏ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻՀՀ	Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ
ԵՀՀ	Եվրասիա հիմնադրամներ-Հայաստան
Ղաշնագիր	Անյ դաշնագիրը, որին նվիրված է Ջեկույցի տվյալ գլուխը
Կոնվենցիա	Անյ կոնվենցիան, որին նվիրված է Ջեկույցի տվյալ գլուխը
Կոմիտե	Անյ կոմիտեն, որին նվիրված է Ջեկույցի տվյալ գլուխը

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Պետությունների կողմից ստեղծված միջազգային համակարգերը կատարյալ չեն, սակայն նրանք պաշտպանում են առավել խորը քառսից: . . . Գլոբալ անկայունությունը, որը սնվում է անհավասարությունից, ճնշումներից, գրկանքներից և շահագործումից, առնչվում է բոլորին՝ թե՛ հարուստին և թե՛ աղքատին: Ձեր պետությունները հիմնել են միջազգային համակարգերը, քանի որ այս սպառնալիքները չեն կարող լուծվել միայն մեկ պետության ջանքերով¹»

Զեյդ Ռասդ ալ Հուսեյն,
ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատար

ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգը սկիզբ է առել 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (ՄԻՀՀ) ընդունմամբ: Հռչակագրին նախորդել են ՄԱԿ-ի կանոնադրության ընդունումը և ՄԱԿ-ի հիմնումը: Թեև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը պարտադիր չի եղել պետությունների համար, այնուամենայնիվ, ՄԻՀՀ-ում տեղ գտած մարդու իրավունքները հետագայում ներառվել են երկու կարևորագույն և պարտադիր ուժ ունեցող փաստաթղթերի՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին ՄԱԿ-ի միջազգային դաշնագրերի մեջ: ՄԻՀՀ-ն և նշված երկու դաշնագրերը միասին ձևավորում են մարդու իրավունքների պաշտպանության նվազագույն չափորոշիչներն ու կոչվում են Մարդու իրավունքների միջազգային օրինաշար:

Վերը նշված փաստաթղթերի ընդունմանը հաջորդեց մի շարք թեմատիկ կոնվենցիաների ընդունումը, որոնք լրացուցիչ պաշտպանություն նախատեսեցին մարդկանց առանձին խմբերի համար (ինչպես, օրինակ, կանայք, երեխաները կամ հաշմանդամություն ունեցող անձինք):

Հարկ է նշել, որ միջազգային «պայմանագիրը», «կոնվենցիան» կամ «դաշնագիրը» միջազգային իրավական գործիքներ են, որոնք պարտավորություններ են ստեղծում այն պետությունների համար, որոնք անդամակցում են այդ փաստաթղթերին: Իսկ նշված փաստաթղթերին անդամակցումը տեղի է ունենում վավերացման միջոցով, ինչը նշանակում է, որ պետությունը կամովին որոշում է հետևել և կատարել տվյալ պայմանագրում նշված դրույթները: Սակայն լինում են դեպքեր, երբ պետությունը կարող է վերապահում կատարել իր կողմից վավերացրած միջազգային պայմանագրի որոշակի հոդվածին (եթե, իհարկե, պայմանագիրը թույլ է տալիս այդպիսի վերապահում անել), ինչի արդյունքում տվյալ հոդվածի կատարումը պետության համար այլևս պարտադիր չի լինի: Հատկանշական է, որ որոշ միջազգային

¹ <http://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/InformalBriefToHRC.aspx#sthash.3DaU8NP.dpuf>

պայմանագրեր ընդլայնել են իրենց պաշտպանությունը այդ պայմանագրերին կից կամընտիր արձանագրությունների միջոցով, որոնք մարդու իրավունքների պաշտպանության լրացուցիչ ընթացակարգեր են նախատեսում, ինչպես օրինակ, մշտադիտարկումը կամ անհատական բողոքների ընդունումը: Որպեսզի լրացուցիչ արձանագրությունը պարտադիր լինի պետության համար, այն նույնպես պետք է պետության կողմից առանձին վավերացվի:

Այսօր ՄԱԿ-ի մարդու իրավունքների կորիզն են կազմում ՄԻՀՀ-ն ու հետևյալ 9 հիմնարար միջազգային պայմանագրերը՝

- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը
- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա
- Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ կոնվենցիան
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա
- Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիա
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա
- Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին կոնվենցիա:

Պետության կողմից վերը նշված մարդու իրավունքների 9 միջազգային պայմանագրերի կատարումը վերահսկում են տվյալ պայմանագրերի հիման վրա ստեղծված մարմինները, այլ կերպ ասած՝ պայմանագրային մարմինները, որոնք անկախ փորձագետներից բաղկացած հանձնաժողովներ են: Յուրաքանչյուր պայմանագրի կատարումը մշտադիտարկվում է իր իսկ հանձնաժողովի կողմից՝ անդամ պետության ներկայացրած զեկույցի, քաղաքացիական հասարակության տրամադրած տեղեկատվության, ինչպես նաև այլ աղբյուրների հիման վրա: Ներկայում տվյալ 9 պայմանագրերի և մեկ լրացուցիչ արձանագրության վերահսկողությունն իրականացվում է հետևյալ 10 պայմանագրային մարմինների կողմից՝

- Մարդու իրավունքների կոմիտե
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտե
- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման հարցերով կոմիտե
- Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտե

- Խոշտանգումների դեմ պայքարի հարցերով կոմիտե
- Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով ենթակոմիտե
- Երեխայի իրավունքների հարցերով կոմիտե
- Միգրանտ աշխատողների հարցերով կոմիտե
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե
- Բռնությամբ անհետացման հարցերով կոմիտե

Բացի ՄԱԿ-ի վերոգրյալ 10 պայմանագրային մարմիններից մարդու իրավունքների ոլորտում պետության պարտավորությունների կատարման հանդեպ վերահսկողություն է իրականացնում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի, Համընդհանուր պարբերական դիտարկման, Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերի միջոցով:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմների գործունեության համակարգումը, իրենց գործունեության վերաբերյալ հանրային իրազեկվածությունը և մարմինների մատչելիությունը և հասանելիությունը ապահովում է ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերազույն հանձնակատարը:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմների, ներառյալ վերը նշված Պայմանագրերի հիման վրա ստեղծված մարմինների գործունեության արդյունքում ձևավորվել է ծավալուն իրավական պաշար, որը հավաքագրվում և ամփոփվում է համապատասխան տվյալների շտեմարաններում: Մասնավորապես, վերջին տարիներին ստեղծվել է Մարդու իրավունքների համընդհանուր ինդեքսը (International Human Rights Index), որի միջոցով հնարավոր է տեղեկատվություն գտնել ՄԱԿ-ի անդամ պետություններից յուրաքանչյուրի վերաբերյալ ընդունված որոշումների, եզրափակիչ դիտարկումների վերաբերյալ: Ստեղծվել են նաև մի շարք թեմատիկ և ըստ մարմինների տվյալների բազաներ: Նշված տվյալների բազաները հասանելի են հետևյալ հղումով:

Այսպիսով ՄԱԿ-ը իր գործունեության գրեթե 70 տարվա ընթացքում ձևավորել է մարդու իրավունքների պաշտպանության ծավալուն իրավական հիմք և, միգուցե ոչ կատարյալ, սակայն գործուն մեխանիզմներ:

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետությունը, անկախանալուն պես, միացել և վավերացրել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների վերը նշված միջազգային պայմանագրերը, ինչպես նաև այդ պայմանագրերին կից որոշ կամընտիր արձանագրություններ: Բացառություն է կազմում Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների պաշտպանության վերաբերյալ կոնվենցիան²: Միաժամանակ, Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

² ՄԱԿ-ի հիմնական պայմանագրերի և նրանց կամընտիր արձանագրությունների վավերացման վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով:

Հետևաբար Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է կատարել այդ պայմանագրերի պահանջները: Նշված պայմանագրերի կատարման և պայմանագրային մարմիններին տեղեկատվություն ներկայացնելու գործընթացը կազմակերպելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ³ հաստատվել է Հայաստանի ազգային զեկույցների պատրաստման համար պատասխանատու պետական մարմինների և այդ զեկույցների ներկայացնելու ժամկետների ցանկը: Այսպես, նշված պայմանագրերի և Համընդհանուր պարբերական դիտարկման շրջանակներում ներկայացվող ազգային զեկույցի պատասխանատու մարմինն է ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, բացառությամբ՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ կոնվենցիայի, որի պատասխանատու մարմինն է ՀՀ արդարադատության նախարարությունը և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի, որի պատասխանատուն է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

Հաշվի առնելով ՔՀԿ-ների առանցքային նշանակությունը ՄԱԿ-ի անդամ պետություններում՝ ներառյալ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության հարցում՝ քաղաքացիներին, քաղաքացիների խմբերին և հասարակական կազմակերպություններին տրված են ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմների հետ աշխատանքի լայն հնարավորություններ: Այնուամենայնիվ, ԵՀՀ-ի կողմից իրականացված որակական հետազոտությունը փաստում է, որ Հայաստանում քաղաքացիական հասարակությունը լիարժեքորեն չի օգտագործում ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմների հնարավորությունները: Հետևաբար, մշակվել է տվյալ Ձեռնարկը, որը կծանոթացնի և գործնական հմտություններ կհաղորդի Հայաստանի քաղաքացիական հասարակությանը ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգի և այդ համակարգում մասնակցության հնարավորությունների վերաբերյալ: Մինևույն ժամանակ, կենտրոնանալով քաղաքացիական հասարակությանը պրակտիկ գիտելիքների փոխանցման վրա ձեռնարկը նպատակ չունի տրամադրել ամբողջական և մանրամասն տեղեկատվություն ՄԱԿ-ի նշված մարմինների գործառնությունների ամբողջ ծավալի վերաբերյալ: ՄԱԿ-ի վերը նշված մարմինների մասին ընդհանուր տեղեկատվություն կարող էք գտնել Ձեռնարկի առաջին բաժնում, ձեռնարկի էրկրորդ բաժինը նվիրված է այդ մարմինների գործունեության շրջանակներում քաղաքացիական հասարակության ներգրավման հնարավորություններին: Ձեռնարկը պարունակում է լրացուցիչ գրականության և էլեկտրոնային ռեսուրսների մի շարք հղումներ: Հետևյալ հղումով նաև կարելի է գտնել պարբերական կերպով լրացվող տեղեկություն ՄԱԿ-ի

³ ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերին 15-ի թիվ N 1793-Ա որոշում

Համընդհանուր պարբերական դիտարկման և պայմանագրային մարմիններին ներկայացվող զեկույցների ժամկետների վերաբերյալ:

ԲԱԺԻՆ 1. ՄԱԿ-Ի ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

1. Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ

Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը գործում է ՄԱԿ-ին Գլխավոր վեհաժողովի 1993թ. մարտի 20-ին ընդունված թիվ 48/141 բանաձևի հիման վրա:

Հանձնակատարի գրասենյակը ՄԱԿ-ի քարտուղարության մաս է, իսկ Գրասենյակի աշխատանքները ղեկավարվում են Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի կողմից: Հանձնակատարի նպատակն է խրախուսել մարդու իրավունքների չափորոշիչները ՄԱԿ-ի բոլոր ծրագրերի միջոցով, ինչպես նաև երաշխավորել, որպեսզի ՄԱԿ-ի երեք հիմնասյուները՝ խաղաղությունն ու անվտանգությունը, զարգացումը և մարդու իրավունքների պաշտպանությունը փոխկապակցված լինեն ՄԱԿ-ի բոլոր մարմինների գործունեության շրջանակներում և հզորացնեն մեկը մյուսին: Հանձնակատարի գրասենյակը կազմում է ՄԱԿ-ի Քարտուղարության մաս և աջակցություն է ցուցաբերում ՄԱԿ-ի մարդու իրավունքների մարմիններին, ներառյալ պայմանագրային մարմիններին:

Հանձնակատարի լիազորությունները

Մարդու իրավունքների հանձնակատարի լիազորությունները հետևյալն են.

- խրախուսել և պաշտպանել մարդու իրավունքները բոլորի համար;
- առաջարկություններ ներկայացնել ՄԱԿ-ի համակարգի իրավասու մարմիններին մարդու բոլոր իրավունքների խրախուսման և պաշտպանության բարելավման վերաբերյալ;
- խրախուսել և պաշտպանել զարգացման իրավունքը;
- տեխնիկական աջակցություն ցուցաբերել մարդու իրավունքների ոլորտում իրականացվող գործունեությանը;
- համակարգել ՄԱԿ-ի կրթական և հանրային իրազեկվածության ծրագրերը;
- ակտիվ դերակատարում ունենալ; մարդու իրավունքների իրացման ընթացքում խոչընդոտների վերացման շրջանակներում;
- ակտիվ դերակատարում ունենալ մարդու իրավունքների տևական խախտումները կանխելու ուղղությամբ;
- երկխոսության մեջ մտնել կառավարությունների հետ՝ բոլորի համար մարդու իրավունքների հանդեպ հարգանք ապահովելու նպատակով;
- զարգացնել միջազգային համագործակցությունը;

- համակարգել ՄԱԿ-ի համակարգի կողմից իրականացվող մարդու իրավունքների խրախուսման և պաշտպանությանն ուղղված գործունեությունը:

Հանձնակատարի գործունեության ձևաչափը

Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գործունեության հիմնական ուղղություններն են.

- չափորոշիչների սահմանումը, որի շրջանակներում հանձնակատարի գրասենյակը փորձագիտական աջակցություն է ցուցաբերում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին և պայմանագրային մարմիններին,
- մարդու իրավունքների մշտադիտարկումը,
- մարդու իրավունքների չափորոշիչների կիրարկման ապահովումը, որի շրջանակներում Հանձնակատարը սերտորեն համագործակցում է կառավարության, տեղական հասարակական կազմակերպությունների հետ,
- մարդու իրավունքների վերաբերյալ կրթության և իրազեկվածության մակարդակի բարձրացումը:

2. Մարդու իրավունքների խորհուրդ

Մարդու իրավունքների խորհուրդը հիմնվել է ՄԱԿ-ի ընդհանուր վեհաժողովի կողմից 2006 թ. մարտի 15-ին ընդունված թիվ 60/251 քանաձևի հիման վրա և փոխարինել է նախկինում գործող ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովին: Խորհուրդն իրականացնում է մարդու բոլոր՝ քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, սոցիալական և մշակութային, ինչպես նաև զարգացում ապրելու իրավունքի խրախուսումը և պաշտպանությունը:

Խորհրդի լիազորությունները

Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է Խորհրդի կազմում ձևավորված մի շարք մարմինների և մեխանիզմների միջոցով, որոնցից կանդիդատանք.

- Համընդհանուր պարբերական դիտարկմանը;
- Հատուկ ընթացակարգերին;
- Գանձատների ընթացակարգին;

- Մարդու իրավունքների խորհրդատվական կոմիտեին:

Գանգատների ընթացակարգ

Ընթացակարգի շրջանակներում Խորհուրդը ստանում է հաղորդումներ անհատներից, խմբերից կամ կազմակերպություններից, որոնք պնդում են, որ իրենք հանդիսանում են մարդու իրավունքների խախտումների գոհ կամ ուղղակի և հավաստի տեղեկատվություն ունեն նման խախտումների մասին: Երկու աշխատանքային խումբ՝ Հաղորդակցման աշխատանքային խումբը և Իրավիճակների ուսումնասիրության աշխատանքային խումբը պատասխանատու են հաղորդումների նախնական ուսումնասիրության համար: Էական և վստահելի աղբյուրներից ստացված խախտումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում են Խորհրդի քննարկմանը: Խորհուրդը, քննարկելով աշխատանքային խմբերի զեկույցները, կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.

- դադարեցնել տվյալ բողոքի վերաբերյալ քննությունը,
- շարունակել իրավիճակի քննությունը և պետությունից պահանջել հետագա տեղեկատվություն տրամադրել ողջամիտ ժամանակահատվածում,
- շարունակել իրավիճակի քննությունը և նշանակել անկախ փորձագետ իրավիճակի մշտադիտարկում իրականացնելու և Խորհրդին այդ մշտադիտարկման արդյունքների մասին հայտնելու նպատակով,
- առաջարկել Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակին տեխնիկական, կարողությունների զարգացմանն ուղղված և խորհրդատվական ծառայություն տրամադրել ներգրավված պետությանը:

Մարդու իրավունքների խորհրդատվական կոմիտե

- Խորհրդատվական կոմիտեն Մարդու իրավունքների խորհրդի համար ծառայում է որպես մարմին, որը Խորհրդի սահմանված ձևով և կարգով կատարում է հետազոտություններ և վերլուծություններ, և համապատասխան առաջարկություններ ներկայացնում Խորհրդին: Այն կազմված է 10 անկախ փորձագետներից: Խորհուրդը, որպես կանոն ունենում է տարեկան, ընդհանուր առմամբ, 10 օր տևողությամբ 2 նստաշրջան:
- Խորհուրդը կազմված է 47 անդամներից, որոնք ընտրվում են ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից: Խորհուրդի նիստերը սովորաբար հրավիրվում են

տարեկան 3 անգամ: Խորհրդի նիստերը տևում են ընդամենը 10 շաբաթ: Կարող են հրավիրվել նաև Խորհրդի արտահերթ նիստեր:

3. Համընդհանուր պարբերական դիտարկում (ՀՊԴ)

Համընդհանուր պարբերական դիտարկման համակարգը ներդրվել է ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի թիվ 60/251 բանաձևով: ՀՊԴ-ն յուրահատուկ մեխանիզմ է, որը գնահատում է, թե որքանով են պետությունները կատարում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող իրենց պարտավորությունները, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի Կանոնադրությունում, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ այն փաստաթղթերում, որոնց միացել է տվյալ դիտարկվող պետությունը, տվյալ պետության՝ կամավոր ստանձնած պարտավորություններում ու հանձնառություններում և կիրառելի միջազգային հումանիտար իրավունքում:

Դիտարկման ձևաչափը

Դիտարկումն իրականացվում է 4 տարի պարբերականությամբ:

Դիտարկման հիմնական փուլերն են.

- Տեղեկատվության նախապատրաստման փուլը, որի հիման վրա իրականացվելու է դիտարկումը, ներառյալ. Կառավարությունների կողմից ներկայացված ազգային զեկույցների ընդունումը, Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից պատրաստված ՄԱԿ-ի կողմից տնօրինվող տեղեկատվության ամփոփումը, այլ շահագրգիռ կողմերի (քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառույցների) կողմից ներկայացված տեղեկատվության ամփոփում, որը կրկին պատրաստվում է Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից;
- Քննարկում Մարդու իրավունքների խորհրդի աշխատանքային խմբում: Դիտարկման ընթացքում Խորհրդի անդամներից ցանկից կազմվում է 3 անդամ

ունեցող աշխատանքային խումբ՝ որոնք իրականացնում են տվյալ պետության վերաբերյալ զեկուցողների դերը;

- Աշխատանքային խմբի կողմից ամփոփ զեկույցի ընդունումը:

Հայաստանի վերաբերյալ իրականացված դիտարկումները և ընդունված հանձնարարականները

Հայաստանը 2 անգամ է ենթարկվել Համընդհանուր պարբերական դիտարկմանը: Այս դիտարկումների ընթացքում ՀՀ-ին հանձնարարականներ են ներկայացվել մարդու իրավունքների ոլորտում առկա խնդիրների լայն ցանկի վերաբերյալ: Որպես կանոն, ՀՀ կառավարությունը ընդունելի է համարել տվյալ հանձնարարականները՝ մերժելով միայն Ադրբեջանի կողմից առաջադրված հանձնարարականները: Վերջին դիտարկման ընթացքում ՀՀ կառավարությունը մերժել Ադրբեջանի կողմից ներկայացված 10 հանձնարարականները, ինչպես նաև մի շարք հանձնարարականներ ուղղված անձի՝ խտրականությունից զերծ մնալու իրավունքի, խոսքի ազատության, պաշտպանությանը, երեխաների զինվորական ծառայությանը և այլն:

	1-ին շրջան	2-րդ շրջան
Երբ է ներկայացվել (ամիս/ամսաթիվ)	17 February 2010	30 October 2014
Ազգային զեկույց	A/HRC/WG.6/8/ARM/1	A/HRC/WG.6/21/ARM/1
Հարցադրումների ցանկ		
ՄԱԿ-ի մարմինների տեղեկատվություն ամփոփում	A/HRC/WG.6/8/ARM/2	A/HRC/WG.6/21/ARM/2
Այլ շահագրգիռ կողմերից ստացված տեղեկատվության ամփոփում	A/HRC/WG.6/8/ARM/3	A/HRC/WG.6/21/ARM/3
Ամփոփ եզրակացություն	A/HRC/15/9	A/HRC/29/11

4. ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերը

Հատուկ ընթացակարգեր անվանման տակ հասկանում ենք այն մասնագիտացված փորձագետների և աշխատանքային խմբերի գործունեությունը, որոնք հիմնվում են Մարդու իրավունքների Խորհրդի, իսկ նախկինում՝ Մարդու իրավունքների

հանձնաժողովի կողմից՝ առանձին պետություններում իրավիճակի կամ առանձին խնդիրների շուրջ մարդու իրավունքների վիճակի դիտարկման, մարդու իրավունքների խրախուսման և պաշտպանության նպատակով:

Սեպտեմբերի 30-ի դրությամբ գործել են 43 թեմատիկ և 10 պետություններում իրավիճակի շուրջ գործունեություն ծավալող հատուկ ընթացակարգեր:

Թեմատիկ մանդատները վերանայվում են յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ, իսկ պետությունների վերաբերյալ մանդատները՝ յուրաքանչյուր տարի:

Հատուկ մանդատ կրողներին իր աջակցություն է ցուցաբերում Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը:

Հատուկ ընթացակարգերը՝

- Ընթացիկ կերպով տարբեր աղբյուրներից ստանում և վեր են լուծում տեղեկատվություն մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ:
- Կապ են պահպանում և կիսում տեղեկատվությունը գործընկերների հետ, պետական կառույցների և ոչ պետական կազմակերպությունների հետ, ՄԱԿ-ի շրջանակներում և ՄԱԿ-ի շրջանակներից դուրս:
- Պահանջում են, հաճախ հրատապ կերպով, պարզաբանումներ Կառավարություններից ենթադրյալ խախտումների վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում ձեռք են առնում միջոցներ մարդու իրավունքները երաշխավորելու և վերականգնելու նպատակով:
- Բարձրացնում են իրազեկվածությունը մարդու իրավունքների խախտումների առանձին դեպքերի կամ խախտման վտանգի վերաբերյալ:
- Առանձին դեպքերում, իրենց մտահոգությունները հրապարակում են լրատվական միջոցների կամ այլ հանրային հայտարարությունների միջոցով:
- Իրականացնում են այցելություններ պետություններ և առաջարկություններ են ներկայացնում կառավարությանը՝ իրավիճակը շտկելու նպատակով:
- Զեկուցում և առաջարկություններ են ներկայացնում, այն դեպքում երբ նախատեսված է մանդատով, Գլխավոր վեհաժողովին, իրենց մանդատի շրջանակներում իրականացվող գործունեության, այցելած տարածքների և առանձին թեմատիկ խնդիրների վերաբերյալ:

- Իրենց մանդատի շրջանակներում կատարում են հետազոտություններ և կարող են իրավական գնահատական ներկայացնել առանձին հիմնախնդիրների վերաբերյալ:

ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերի կողմից Հայաստանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունները և ընդունված զեկույցները, հանձնարարականները

ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերը 2006 թ.-ից ի վեր ունեն մշտական հրավեր Հայաստանի կառավարության կողմից: Հայաստան մինչ այժմ այցելել են միայն երկու ընթացակարգերը՝ Մարդու իրավունքների պաշտպանների հարցերով հատուկ զեկուցողը, 2010 թ-ին (Մարդու իրավունքների պաշտպանների հարցերով հատուկ զեկուցող Մարգարետ Սեկկագայի զեկույցը. Այց Հայաստան) և Կամայական ազատագրվումների հարցերով աշխատանքային խումբը 2011 թ.-ին (Կամայական ազատագրվումների հարցերով կոմիտեի զեկույց. Հայաստան): Այցելության արդյունքում նրանք ախապատրաստել են համապատասխան զեկույցները:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների պայմանագրային մարմինները

1. Մարդու իրավունքների կոմիտե

Մարդու իրավունքների կոմիտեն գործում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի հիման վրա: Այն մշտադիտարկում է պետության կողմից Դաշնագրի իրականացումը, որի 6-27-րդ հոդվածները սահմանում են անձի մի շարք հիմնարար իրավունքներ: Տվյալ իրավունքներից են կյանքի իրավունքը, խոշտանգումներից զերծ մնալու իրավունքը, ստրկությունից զերծ մնալու իրավունքը, անձի ազատության և անվտանգության իրավունքը, ազատությունից զրկված անձանց իրավունքները, արդար դատաքննության իրավունքը, խաղաղ հավաքներ անց կացնելու իրավունքը, օրենքի առջև հավասարության իրավունքը և այլն: Վերը նշված իրավունքների ցանկը լրացվել է մահապատժի արգելքով, որը սահմանվել է Երկրորդ կամրնտիր արձանագրությամբ: Դաշնագրի կամրնտիր արձանագրության համաձայն Կոմիտեն լիազորված է նաև բողոքներ ընդունել:

Կոմիտեի լիազորությունները

Կոմիտեն լիազորված է կատարել մի շարք գործողություններ, որոնք ուղղված են ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի կատարման հանդեպ մշտադիտարկմանը:

Կոմիտեի լիազորությունները հետևյալն են.

- Դիտարկել անդամ պետությունների պարբերական զեկույցները

Պարբերական զեկույցները Պետության կառավարության կողմից ներկայացնում են Կոմիտեի կողմից յուրաքանչյուր նախորդ զեկույցի դիտարկման հիման վրա ընդունված ամփոփ եզրակացություններում սահմանված ժամկետում: Միննույն ժամանակ, Կոմիտեն կարող է որոշ, առավել հրատապ լուծում պահանջող խնդիրների համար սահմանել Կոմիտեին զեկույցելու, կամ ձեռնարկված քայլերի վերաբերյալ տեղեկատվություն հայտնելու առավել կարճ ժամկետ:

Առաջին անգամ դիտարկման զեկույցը ներկայացվում է միանալուց/վավերացնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

- Ստանալ և քննարկել քաղաքացիական և քաղաքական իրավունքների խախտումների վերաբերյալ անհատական (եթե ենթադրյալ խախտում կատարած պետության կողմից վավերացվել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի դաշնագրին կից 1-ին արձանագրությունը) կամ միջպետական (եթե ենթադրյալ խախտում կատարած պետության կողմից վավերացվել է Դաշնագրի 41-րդ հոդվածը) բողոքները:
- Մշակել և ընդունել Ընդհանուր մեկնաբանություններ, որոնց միջոցով մեկնաբանվում են Դաշնագրի դրույթները թե՛ բովանդակային, թե՛ ընթացակարգային իմաստով:

Կոմիտեի կազմը և գործունեության ձևաչափը

Կոմիտեն կազմված է 18 անկախ փորձագետներից, որոնք գործում են իրենց անունից և չեն ներկայացնում պետությունը: Փորձագետներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, պետությունների կողմից առաջադրված թեկնածուների ցանկից: Կոմիտեն սովորաբար ամեն տարի ունենում է երեք հերթական նիստ:

Անհրաժեշտության դեպքում կարող են հրավիրվել նաև հատուկ նիստեր: Կոմիտեի աշխատանքային և պաշտոնական լեզուներն են արաբերենը, չինարենը, անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը և իսպաներենը, ինչը նշանակում է, որ Կոմիտեին ուղարկվող փաստաթղթերը պետք է կազմված լինեն այս լեզուներից որևէ մեկով: Անհրաժեշտության դեպքում Կոմիտեն կարող է կազմավորել լրացուցիչ մարմիններ՝ ենթակոմիտեներ կամ ad hoc կոմիտեներ:

Թե՛ Կոմիտեի, թե՛ Կոմիտեի լրացուցիչ մարմինների նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ Կոմիտեն կայացնում է հակառակ որոշում:

Պարբերական զեկույցների ամփոփ եզրակացությունների ընդունումը տեղի է ունենում փակ նիստի ընթացքում:

Հայաստանի վերաբերյալ իրականացված դիտարկումները և ընդունված եզրափակիչ դիտողությունները կամ հանձնարարականները

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի դաշնագիրն, ինչպես նաև Կամբոջիայի արձանագրությունը 1993թ.: Հայաստանը որևէ հայտարարություն չի կատարել Դաշնագրի 41-րդ հոլմի վերաբերյալ, որի համաձայն պետության համապատասխան հայտարարության հիման վրա Կոմիտեն կարող է ստանալ ու քննարկել Հայաստանի կողմից Դաշնագրով նախատեսված իր պարտավորությունների չկատարման վերաբերյալ այլ մասնակից պետության հաղորդումները: Նշվածը նշանակում է, որ այլ պետություն չի կարող Հայաստանի կողմից Դաշնագրով սահմանված մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հաղորդում ներկայացնել Կոմիտե: Կոմիտեն լիազորված է Հայաստանի հանդեպ իրականացնել պարբերական զեկույցների դիտարկում, դրա հիման ընդունել եզրափակիչ դիտողություններ կամ հանձնարարականներ, քննարկել Հայաստանի դեմ անհատների կողմից ներկայացված բողոքները:

Հայաստանի պարբերական զեկույցների դիտարկում

Մինչ օրս Հայաստանը երկու անգամ է ենթարկվել Կոմիտեի դիտարկմանը: Առաջին՝ նախնական դիտարկման շրջանակներում քննարկված հիմնական խնդիրներն են եղել անկախություն ձեռք բերած պետության օրենսդրական դաշտի համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին, ներառյալ՝

Սահմանադրության վերանայումը, Քրեական և Քաղաքացիական օրենսգրքերի, Քրեական դատավարության և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի, Աշխատանքային, Ընտրական և մի շարք այլ օրենսգրքերի վերանայումը:

Կոմիտեն դիտարկումների արդյունքում իր մտահոգություններն է հայտնել Հայաստանում դատավորների անկախության, իրավապահ մարմինների կողմից վատ վերաբերմունքի և խոշտանգումների կիրառման, քրեակատարողական հիմնարկներում վատ պայմանների, կանանց հանդեպ խտրականության, թափառաշրջիկ երեխաների առկայության և այլ հիմնախնդիրների վերաբերյալ: Առաջին դիտարկման ընթացքում Կոմիտեի կողմից նշված մտահոգությունները հիմնականում կրել են ընդհանուր բնույթ: Այս դիտարկման ընթացքում որևէ միջազգային կամ տեղական հասարակական կազմակերպություն չի ներկայացրել այլընտրանքային տեղեկատվություն:

2010-2012 թթ. Հայաստանի երկրորդ և երրորդ դիտարկումը Կոմիտեում անցավ միաժամանակ: Այս երկու դիտարկումները միացվեցին, քանի որ ՀՀ կառավարությունն ուշացումով էր ներկայացրել իր հերթական պարբերական զեկույցը:

Նշված դիտարկումը առանձնանում է նրանով, որ այս ընթացքում այլընտրանքային տեղեկատվություն են ներկայացրել մի շարք տեղական և միջազգային կազմակերպություններ: Հատկանշական է, որ տվյալ շրջանում հասարակական կազմակերպությունները միավորվել էին և ներկայացրել համատեղ համապարփակ զեկույց: Այսինքն՝ Կոմիտեն իր տրամադրության տակ բացի ազգային և մարդու իրավունքների պաշտպանի զեկույցից, ունեցել է երկրում քաղաքացիական հասարակության տեսակետները ներկայացնող թե՛ թեմատիկ, թե՛ համընդհանուր զեկույցներ: Այս ընթացքում բարձրացված խնդիրները կրում էին առավել թիրախավորված բնույթ: Ուստի՝ Կոմիտեի ամփոփ եզրակացություններում մտահոգությունները և հանձնարարականները ևս առավել թիրախավորված էին: Մասնավորապես՝ Կոմիտեն անդրադարձել է Դաշնագրով երաշխավորված իրավունքների մասին դատավորների, իրավաբանների և իրավական ոլորտի աշխատողների իրազեկվածությանը, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի անկախության երաշխավորման պայմաններին, ընտանեկան բռնության բոլոր տեսակներին քրեականացման, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների հիմնական պատճառներին, խոշտանգումների դեմ պայքարի արդյունավետ միջոցների ձևավորմանը, քրեակատարողական

հիմնարկների գերծանրաբեռնվածությանը, լրագրողների, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող անձանց պաշտպանությանը վերաբերող խնդիրներին:

Երեք հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ Կոմիտեն տեղեկատվություն է պահանջել ամփոփ եզրակացությունների ընդունումից հետո մեկ տարվա ընթացքում: Այդ հանձնարարականներն են.

- 2008թ. մարտի 1-ին ՀՀ ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառման վերաբերյալ քննության իրականացման և պատասխանատուներին անպատիժ թողնելու,
- ազատագրկման վայրերում խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի կիրառման մասին բողոքների քննության ամբողջությամբ անկախ մեխանիզմի բացակայության,
- դատավորների նշանակման ընթացակարգի վերաբերյալ, ինչը նրանց քաղաքական ազդեցության տակ լինելու մտավախություն է առաջացնում:

ՀՀ կառավարության կողմից հերթական ազգային զեկույցի ներկայացման ժամկետը եղել է 2016 թ. հուլիսի 27-ը, սակայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը ազգային զեկույցի ներկայացման վերաբերյալ տեղեկատվություն դեռևս չի հրապարակել:

	1-ին շրջան	2-3-րդ շրջաններ	4-րդ շրջան
Երբ է ներկայացվել (ամիս/ամսաթիվ)	1998 ապրիլի 30	2010թ. ապրիլի 28	---
Երբ պետք է ներկայացվեր (ամիս/ամսաթիվ)	1994թ. սեպտեմբերի 22	2001թ. հոկտեմբերի 1	2016թ. հուլիսի 27
Ազգային զեկույց	CCPR/C/92/Add.2	CCPR/C/ARM/2-3	
Հարցադրումների ցանկ		CCPR/C/ARM/Q/2 CCPR/C/ARM/Q/2/Add.1	
Այլընտրանքային տեղեկատվություն միջազգային հասարակական կազմակերպությունների կողմից		Conscience and Peace Tax International Conscience and Peace Tax International (CPTI) and International Fellowship of	

		<u>Reconciliation (IFOR)</u> <u>Equal Out at the United Nations</u> <u>Global Initiative to End All Corporal Punishment of Children</u> <u>Human Rights Monitoring Group of National Minorities (MRMG)</u> <u>International Disability Alliance (IDA)</u> <u>International Disability Alliance (IDA)</u> <u>Joint Submission Penal Reform International</u>	
Այլընտրանքային տեղեկատվություն տեղական հասարակական կազմակերպությունների կողմից		<u>Helsinki Citizen's Assembly Vanadzor (HCA Vanadzor), Human Rights Litigation and International Advocacy Clinic and Human Rights Programme of the University of Minnesota</u> <u>Joint Submission - Armenian human rights organizations</u> <u>NGO Submission</u>	
Այլընտրանքային տեղեկատվություն մարդու իրավունքների պաշտպանության ազգային մարմին կողմից		<u>Մարդու իրավունքների պաշտպան</u>	

Ամփոփ եզրակացություն	1998թ. նոյեմբերի 19 <u>CCPR/C/79/Add.100</u>	2012թ. օգոստոսի 31 <u>CCPR/C/ARM/CO/2</u>	
----------------------	---	--	--

Հայաստանը և անհատական բողոքները

Ինչպես վերը նշվեց, Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է Մարդու իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի դեմ ներկայացվող անհատական բողոքների քննարկման լիազորությունը:

Թեև Կոմիտեն նման լիազորություն ունի 1993 թ.-ից ի վեր, այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության դեմ ներկայացվել է ընդհամենը մեկ բողոք: Բողոքը ներկայացվել է 2001թ. Սվետլանա Խաչատրյանի կողմից և վերաբերել է Սվետլանա Խաչատրյանի կողմից արդար դատաքննության իրավունքի իրացմանը: 2005թ. Կոմիտեն որոշում է կայացրել, ըստ որի տվյալ բողոքն անընդունելի է ճանաչվել:

Կոմիտեի ընդհանուր մեկնաբանությունները

Թիվ 5 Ընդհանուր մեկնաբանություն - Շեղումներ (4-րդ հոդված)

Թիվ 6 Ընդհանուր մեկնաբանություն – Կյանքի իրավունք (6-րդ հոդված)

Թիվ 8 Ընդհանուր մեկնաբանություն - Ազատության և անվտանգության իրավունք (9-րդ հոդված)

Թիվ 10 Ընդհանուր մեկնաբանություն- Կարծիքի և խոսքի ազատություն (19-դ հոդված)

Թիվ 11 Ընդհանուր մեկնաբանություն – Պատերազմի քարոզչության և ազգային, ռասայական և կրոնական ատելություն հրահրելու արգելք (20-րդ հոդված)

Թիվ 12 Ընդհանուր մեկնաբանություն – Ժողովուրդների ինքնորոշման իրավունք (1-ին հոդված)

Թիվ 13 Ընդհանուր մեկնաբանություն- Արդարադատության իրականացում (14-րդ հոդված)

Թիվ 14 Ընդհանուր մեկնաբանություն – Կյանքի իրավունք (6-րդ հոդված)

Թիվ 15 Ընդհանուր մեկնաբանություն- Օտարերկրացիների կարգավիճակը Դաշնագրի կարգավորումների շրջանակներում

Թիվ 16 Ընդհանուր մեկնաբանություն - Անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի անձեռնմխելիության, թղթակցության գաղտնիքի, պատվի ու հեղինակության պաշտպանության իրավունք (17-րդ հոդված)

Թիվ 17 Ընդհանուր մեկնաբանություն – Երեխայի իրավունքներ (24-րդ հոդված)

Թիվ 18 Ընդհանուր մեկնաբանություն – Խտրականության բացառում

Թիվ 19 Ընդհանուր մեկնաբանություն – Ընտանիքի պաշտպանությունը, ամուսնանալու ազատություն, ամուսնիներհի հավասարություն (23-րդ հոդված)

Թիվ 20 Ընդհանուր մեկնաբանություն – Խոշտանգումների, այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ (7-րդ հոդված) Թիվ 21 Ընդհանուր մեկնաբանություն - Ազատագրկված անձանց նկատմամբ մարդասիրական վերաբերմունքը (10-րդ հոդված)

Թիվ 22 Ընդհանուր մեկնաբանություն - Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք (18-րդ հոդված)

Թիվ 23 Ընդհանուր մեկնաբանություն – Փոքրամասնությունների իրավունքներ (27-րդ հոդված)

Թիվ 24 Ընդհանուր մեկնաբանություն – Հիմնախնդիրներ կապված Դաշնագրի կամ Կամբոջի արձանագրությունների վավերացման կամ միացման ընթացքում կատարված վերապահումներին, կամ Դաշնագրի 41-րդ հոդվածի վերաբերյալ կատարված հայտարարությունների վերաբերյալ

Թիվ 25 Ընդհանուր մեկնաբանություն - Պետական գործերը վարելու, Ընտրական և պետական ծառայության մտնելու իրավունք (25-րդ հոդված)

Թիվ 26 Ընդհանուր մեկնաբանություն - Պարտավորությունների շարունակականությունը

Թիվ 27 Ընդհանուր մեկնաբանություն - Տեղաշարժի ազատություն (27-րդ հոդված)

Թիվ 28 Ընդհանուր մեկնաբանություն - Կնոջ և տղամարդու իրավահավասարությունը (3-րդ հոդված)

Թիվ 29 Ընդհանուր մեկնաբանություն - Արտակարգ դրության պայման (4-րդ հոդված)

Թիվ 30 Ընդհանուր մեկնաբանություն - 40-րդ հոդվածով սահմանված զեկույցներ ներկայացնելու պարտավորությունները

Թիվ 31 Ընդհանուր մեկնաբանություն – Անդամ պետությունների վրա դրված ընդհանուր պարտավորությունների բնույթը

Թիվ 32 Ընդհանուր մեկնաբանություն – Դատարանների և տրիբունալների առջև հավասարության իրավունքը և արդար դատաքննության իրավունքը (14-րդ հոդված)

Թիվ 33 Ընդհանուր մեկնաբանություն – Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրությունից բխող պարտավորություններ

Թիվ 34 Ընդհանուր մեկնաբանություն - Կարծիք ունենալու և արտահայտվելու իրավունքը (19-րդ հոդված)

Թիվ 35 Ընդհանուր մեկնաբանություն - Անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը (9-րդ հոդված)

Վերաբերելի փաստաթղթեր և հղումներ .

- Պ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի դաշնագիր
- Պ Դաշնագրի կամընտիր արձանագրություն
- Պ Երկրորդ կամընտիր արձանագրություն
- Պ Կոմիտեի ընթացակարգային կանոններ
- Պ Կոմիտեի աշխատանքային կարգ

Կայքէջ՝

- Պ <http://www.ohchr.org/EN/HRBodies/CCPR/Pages/CCPRIndex.aspx>

2. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ՄԱԿ-ի կոմիտեն ստեղծվել է Տնտեսական և սոցիալական խորհրդի թիվ 1985/17 բանաձևի հիման վրա: Այն մշտադիտարկում է պետության կողմից Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ՄԱԿ-ի դաշնագրի կատարումը, որով սահմանվում են մի շարք հիմնարար իրավունքներ: Դրանցից են, մասնավորապես, աշխատելու, աշխատանքի արդար և նպաստավոր պայմանների, արհեստակցական միություններ ստեղծելու և այդպիսիների մեջ մտնելու, սոցիալական ապահովության, ընտանիքի պաշտպանության, բավարար այնպիսի կենսամակարդակի իրավունքը, որն իր մեջ ներառում է բավարար սնունդ, հագուստ ու բնակարան և կյանքի պայմանների

անընդհատ բարելավման իրավունքը, ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը, կրթության իրավունքը, մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը:

Կոմիտեի լիազորությունները

Կոմիտեն լիազորված է կատարել մի շարք գործողություններ, որոնք ուղղված են ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ՄԱԿ-ի դաշնագրի կատարման հանդեպ վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտությունից:

Կոմիտեի լիազորությունները հետևյալն են.

- Դիտարկել անդամ պետությունների պարբերական զեկույցները Պարբերական զեկույցները Պետության կառավարության կողմից ներկայացնում են Կոմիտե յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ:
Առաջին անգամ դիտարկման զեկույցը ներկայացվում է միանալուց/վավերացնելուց հետո երկու տարվա ընթացքում:
- Ստանալ և քննարկել տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների խախտումների վերաբերյալ անհատական (այն դեպքում, եթե ենթադրյալ խախտում իրականացրած պետության կողմից վավերացվել է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրությունը) կամ միջպետական (եթե անդամ պետությունը հայտարարել է, որ ճանաչել է Կոմիտեի լիազորությունը ստանալ և քննարկել իր վերաբերյալ այլ պետությունների կողմից ներկայացվող բողոքները) բողոքները:
- Մշակել և ընդունել Ընդհանուր մեկնաբանություններ, որոնց միջոցով մեկնաբանվում են Դաշնագրի դրույթները թե՛ բովանդակային, թե՛ ընթացակարգային իմաստով:

Կոմիտեի գործունեության ձևաչափը

Կոմիտեն կազմված է 18 անկախ փորձագետներից, որոնք գործում են իրենց անունից և չեն ներկայացնում պետությունը: Անդամները ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, պետությունների կողմից առաջադրված թեկնածուների ցանկից: Կոմիտեն սովորաբար ունենում է երկու հերթական նստաշրջան յուրաքանչյուր տարի: Կոմիտեի պաշտոնական լեզուներն են արաբերենը, անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը և իսպաներենը, իսկ աշխատանքային լեզուները՝ անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը և իսպաներենը: Կոմիտեին ուղարկվող փաստաթղթերը պետք է կազմված լինեն վերոնշյալ պաշտոնական լեզուներից որևէ մեկով:

Անհրաժեշտության դեպքում Կոմիտեն կարող է կազմավորել լրացուցիչ մարմիններ: Թե՛ Կոմիտեի, թե՛ Կոմիտեի աջակցող մարմինների նիստերը բաց են անցկացվում, բացառությամբ այն դեպքերի, երբ Կոմիտեն կայացնում է հակառակ որոշումը:

Հայաստանի վերաբերյալ իրականացված դիտարկումները և ընդունված եզրափակիչ դիտողությունները կամ հանձնարարականները

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան 1993 թ.: Կամընսիթ արձանարգությունը ՀՀ կողմից թեև ստորագրվել է 2009 թ., սակայն դեռևս չի վավերացվել: Հետևաբար, Կոմիտեն լիազորված է Հայաստանի հանդեպ իրականացնել պարբերական զեկույցների դիտարկում, դրա հիման վրա ընդունել եզրափակիչ դիտողություններ կամ հանձնարարականներ:

Հայաստանի պարբերական զեկույցների դիտարկում

Հայաստանը երկու անգամ է ենթարկվել Կոմիտեի դիտարկմանը: Առաջին դիտարկման արդյունքում Կոմիտեն իր անհանգստությունն է հայտնել ՀՀ-ն իրավական դաշտում Դաշնագրի իրավական կարգավիճակի, աշխատաշուկայում կանանց և տղամարդկանց հավասար ներգրավվածության, սննդի, բնակարանի, առողջության և կրթության իրավունքների լիարժեք իրացման և մի շարք այլ հիմնախնդիրների վերաբերյալ: 2014 թ. Կոմիտեն ընդունեց երկրորդ և երրորդ շրջանի պարբերական դիտարկումների հիման վրա զեկույցը: Զեկույցը անդրադարձել է այն հանգամանքին, որ Կառավարության կողմից չի ներկայացվել Դաշնագրով երաշխավորված իրավունքների իրացման նպատակով ընդունված

քաղաքականության, օրենքների և հայեցակարգերի ազդեցության վերաբերյալ փաստացի տեղեկատվություն: Կոմիտեն առանձնահատուկ շեշտադրել է Դաշնագրով երաշխավորված իրավունքների պրոգրեսիվ իմպլեմենտացիայի նպատակով անհրաժեշտ միջոցների, ներառյալ՝ ֆինանսական ներդրումների անհրաժեշտությունը՝ «հնարավոր հասանելի ռեսուրսների»⁴ օգտագործման սկզբունքին համապատասխան: Հատկանշական է, որ տվյալ իրավունքների պաշտպանության ոլորտում Կոմիտեն ևս անդրադարձել է անկախ դատական համակարգի կայացմանը: Կոմիտեն անդրադարձել է նաև խտրականության բացառման նպատակով համապարփակ օրենսդրության ընդունման անհրաժեշտությանը, հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ խտրականության, հասարակությունում հայրիշխանական մոտեցումների տարածվածությանը, ներառյալ՝ կանանց և տղամարդկանց սոցիալական դերերի շուրջ կարծրատիպային վերաբերմունքի տարածմանը: Կոմիտեն կրկին անդրադարձել է անձանց աշխատանքով ապահովման, կրթական իրավունքների ապահովման, ինչպես նաև բնակարանային ապահովման, ընտանեկան բռնության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների հիմնախնդիրներին:

	1-ին շրջան	2-3-րդ շրջաններ	4-րդ շրջան
Երբ է ներկայացվել (ամիս/ամսաթիվ)	1997թ. հուլիսի 18	2011թ. հուլիսի 18	
Երբ պետք է ներկայացվեր (ամիս/ամսաթիվ)	1995թ. հունիսի 30	2000թ. հունիսի 30	30 May 2019
Ազգային զեկույց	E/1990/5/Add.36	E/C.12/ARM/2-3	
Հարցադրումների ցանկ	E/C.12/Q/ARM/1	E/C.12/ARM/Q/2-3	
Այլընտրանքային տեղեկատվություն միջազգային հասարակական կազմակերպությունների կողմից		Global Initiative to End All Corporal Punishment of Children (PSWG) Human Rights & Tobacco Control Network (ENG) International Baby Food Action Network (ENG)	
Այլընտրանքային տեղեկատվություն տեղական			

⁴ E/C.12/2007/1

հասարակական կազմակերպությունների կողմից			
Այլընտրանքային տեղեկատվություն մարդու իրավունքների պաշտպանության ազգային մարմին կողմից		The Human Rights Defender (PSWG) The Human Rights Defender Institution (PSWG)	
Անփոփ եզրակացություն	08 Dec 1999 E/C.12/1/Add.39	15 Jul 2014 E/C.12/ARM/CO/2-3	

Կոմիտեի ընդհանուր մեկնաբանությունները

Թիվ 1 Ընդհանուր մեկնաբանություն - Ջեկույցների ներկայացումը անդամ պետությունների կողմից

Թիվ 2 Ընդհանուր մեկնաբանություն - Միջազգային տեխնիկական աջակցության միջոցները (22-րդ հոդված)

Թիվ 3 Ընդհանուր մեկնաբանություն - Անդամ պետությունների պարտավորությունների պարտավորությունների բնույթը (2-րդ հոդվածի 1-ին մաս)

Թիվ 4 Ընդհանուր մեկնաբանություն - Բավարար բնակարանային պայմանների իրավունք (11-րդ հոդվածի առաջին մաս)

Թիվ 5 Ընդհանուր մեկնաբանություն - Հաշմանդամություն ունեցող անձինք (25-րդ հոդված)

Թիվ 6 Ընդհանուր մեկնաբանություն - Տարեց անձանց տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները

Թիվ 7 Ընդհանուր մեկնաբանություն - Բավարար բնակարանային պայմանների իրավունք (11-րդ հոդվածի առաջին մաս): Հարկադիր վտարումներ

Թիվ 8 Ընդհանուր մեկնաբանություն - Կապը տնտեսական պատժամիջոցների և տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների միջև (25-րդ հոդված)

Թիվ 9 Ընդհանուր մեկնաբանություն - Դաշնագրի ազգային կիրարկումը (25-րդ հոդված)

Թիվ 10 Ընդհանուր մեկնաբանություն - Մարդու իրավունքների պաշտպանության ազգային համակարգերի դերը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության ոլորտում (25-րդ հոդված)

Թիվ 11 Ընդհանուր մեկնաբանություն - Նախնական կրթության գործողությունների ծրագիր (13-րդ հոդված)

Թիվ 12 Ընդհանուր մեկնաբանություն - Բավարար սննդի իրավունք (11-րդ հոդված)

Թիվ 13 Ընդհանուր մեկնաբանություն - Կրթության իրավունք (13-րդ հոդված)

Թիվ 14 Ընդհանուր մեկնաբանություն - Առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը (12-րդ հոդված)

Թիվ 15 Ընդհանուր մեկնաբանություն - Ջրի իրավունք

Թիվ 16 Ընդհանուր մեկնաբանություն - Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հավասար իրացումը տղամարդկանց և կանանց կողմից

Թիվ 17 Ընդհանուր մեկնաբանություն - Բարոյական և նյութական շահերի պաշտպանությունից օգտվելու իրավունքը, որոնք առաջանում են ցանկացած գիտական, գրական կամ գեղարվեստական աշխատությունների կապակցությամբ, որոնց հեղինակը հանդիսանում է նա (15-րդ հոդված)

Թիվ 18 Ընդհանուր մեկնաբանություն - Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների 6-րդ հոդված

Թիվ 19 Ընդհանուր մեկնաբանություն - Սոցիալական ապահովության իրավունքը

Թիվ 20 Ընդհանուր մեկնաբանություն - Խտրականության բացառումը տնտեսական, սոցիալական և մշակութային

Թիվ 21 Ընդհանուր մեկնաբանություն - Մշակութային կյանքին մասնակցելու յուրաքանչյուրի իրավունքը

Թիվ 22 Ընդհանուր մեկնաբանություն - Աշխատանքի արդար և նպաստավոր պայմանների իրավունք (7-րդ հոդված)

Թիվ 23 Ընդհանուր մեկնաբանություն - Սեռական և վերարտադրողական իրավունքի վերաբերյալ (12-րդ հոդված)

Վերաբերելի փաստաթղթեր և հղումներ .

- ☞ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրով
- ☞ Տնտեսական և սոցիալական խորհրդի թիվ 1985/17 բանաձև
- ☞ Ընթացակարգային կանոններ
- ☞ Աշխատանքային կարգ

3. Ռասայական խտրականության դեմ պայքարի կոմիտե

Ռասայական խտրականության դեմ պայքարի կոմիտեն գործում է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի հիման վրա: Այն իրականացնում է պետության կողմից Կոնվենցիայի իրականացման մշտադիտարկումը: Կոնվենցիայի իմաստով «ռասայական խտրականությունը» ներառում է ռասայի, մաշկի գույնի, ցեղային, ազգային կամ էթնիկական ծագման հատկանիշների հիմքով ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որոնք ունեն քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները չեղյալ հայտարարելու կամ դրանց ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում են նման հետևանքների:

Կոմիտեի լիազորությունները

Կոմիտեն ունի հետևյալ լիազորությունները.

- Դիտարկել անդամ-պետությունների կողմից ներկայացվող պարբերական զեկույցները: Պարբերական զեկույցները ներկայացվում են յուրաքանչյուր 2 տարին մեկ անգամ: Առաջին նախնական զեկույցը պետության կողմից ներկայացվում է Կոնվենցիան վավերացնելուց հետո 1 տարվա ընթացքում:
- Ընդունել և քննության առնել հաղորդումներ.
 - առանձին անձանցից կամ անձանց խմբերից, որոնք պնդում են, թե իրենք տվյալ մասնակից պետության կողմից սույն Կոնվենցիայում ամրագրված որևէ իրավունքի խախտման գոհ են (այն դեպքում, եթե անդամ պետությունը հայտարարել է, որ ճանաչում է Կոմիտեի այդ իրավասությունը);

- մասնակից պետությունից, եթե այն գտնում է, որ մյուս մասնակից պետությունը չի կատարում Կոնվենցիայի դրույթները:

- Վաղ նախագգուշացման և հրատապ գործելու ընթացակարգ: Այս ընթացակարգը ներդրվել է 1993 թ. ընդունված Աշխատանքային փաստաթղթի և 2007 թ. -ին ընդունված Վաղ նախագգուշացման և հրատապ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ ուղեցույցի հիման վրա: Այս ընթացակարգը Կոմիտեի կողմից կարող է կիրառվել ՄԱԿ-ի գործակալությունների և մարդու իրավունքների մարմինների, Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերի, մարդու իրավունքների ազգային մեխանիզմների, մարդու իրավունքների ազգային կառույցների, հասարակական կազմակերպությունների կողմից ստացված տեղեկատվության հիման վրա, որոնք արձանագրում են Կոնվենցիայի էական խախտում: Այն դեպքում, երբ Կոմիտեն ուղեցույցով ամրագրված չափորոշիչների հիման վրա որոշում է կայացնում՝ իրավիճակը ուսումնասիրել վաղ նախագգուշացման և հրատապ գործողություններ իրականացնելու ընթացակարգի լույսի ներքո, այն ձեռնարկում է համարժեք միջոցառումներ, որոնք կարող են լինել հետևյալներից մեկը՝
 - տեղեկատվություն պահանջել անդամ պետությունից իրավիճակի վերաբերյալ,
 - Քարտուղարությունից պահանջել տեղեկատվություն հավաքագրել ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունների, մարդու իրավունքների ազգային հաստատությունների, հասարակական կազմակերպությունների միջոցով;
 - որոշում ընդունել, որով նաև կարող է առանձնահատուկ մտահոգություն հայտնել իրավիճակի վերաբերյալ և որոշակի գործողություններ կատարելու առաջարկություններ ներկայացնել:

- Մշակել և ընդունել Ընդհանուր մեկնաբանություններ, որոնց միջոցով մեկնաբանվում են Կոնվենցիայի դրույթները թե՛ բովանդակային, թե՛ ընթացակարգային իմաստով:

Ռասայական խտրականության դեմ պայքարի կոմիտեն ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններից առաջին մարմինն է և ձևավորվել է 1970 թ. -ին: Կոմիտեն կազմված է 18 անկախ փորձագետներից, որոնք գործում են անձնապես: Անդամները ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, պետությունների կողմից առաջադրված թեկնածուների ցանկից: Կոմիտեն սովորաբար յուրաքննաչուր տարի ունենում է երկու հերթական նիստ: Կոմիտեի աշխատանքային և պաշտոնական լեզուներն են արաբերենը, չինարենը, անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը և իսպաներենը, ուստի՝ Կոմիտեին ուղարկվող փաստաթղթերը պետք է կազմված լինեն այս լեզուներից որևէ մեկով: Անհրաժեշտության դեպքում Կոմիտեն կարող է կազմավորել լրացուցիչ մարմիններ՝ ենթակոմիտեներ կամ ad hoc կոմիտեներ: Կոմիտեի նիստերը անց կացվում են բաց կերպով, բացառությամբ այն դեպքերի, երբ Կոմիտեն կայացնում է հակառակ որոշումը:

Հայաստանի վերաբերյալ իրականացված դիտարկումները և ընդունված եզրափակիչ դիտողությունները կամ հանձնարարականները

Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման միջազգային կոնվենցիան վավերացվել է ՀՀ կողմից 1993 թ. -ին: Այդ ժամանակից ի վեր Հայաստանը ներթարկվել է կոմիտեի պարբերական դիտարկմանը 3 անգամ: Նախնական և 2-րդ շրջանի դիտարկման արդյունքում ընդունված իր ամփոփ եզրակացություններում Կոմիտեն իր մտահոգությունն է հայտնել քրեական օրենսգրքով ռասայական խտրականության դեմ պաշտպանության լիարժեք երաշխիքների բացակայության վերաբերյալ, մասնավորապես՝ այն մասին, որ ռասայական առավելության կամ ռասայական խտրականության հրահրումը արգելված չեն Քրեական օրենսգրքով: Ինչպես նաև կառավարությունը տեղեկատվություն չի տրամադրել ռասայական խտրականությամբ հրահրված և քննության առնված հանցագործությունների վերաբերյալ: Կոմիտեն իր մտահոգություններն է հայտնել նաև ազգային փոքրամասնությունների՝ իրենց լեզվով կրթություն ստանալու իրավունքի ապահովման հիմնախնդիրների կապակցությամբ: Հատկանշական է, որ այն նույն մտահոգությունները պահպանվել են նաև 3-4-րդ և 5-6-րդ դիտարկումների ընթացքում ընդունված ամփոփ եզրակացություններում: 3-4-րդ և 5-6-րդ դիտարկումների ընթացքում ընդունված ամփոփ եզրակացություններում Կոմիտեն իր մտահոգությունն է հայտնել նաև ազգային փոքրամասնությունների

ներկայացուցիչների քաղաքական ներգրավվածության հիմնախնդրի, աշխատաշուկայում ներգրավվածության հիմնախնդիրների վերաբերյալ:

	1-ին-2րդ շրջան	3-4-րդ շրջաններ	5-րդ-6-րդ շրջան	7-11-րդ շրջան
Երբ է ներկայացվել (ամիս/ամսաթիվ)	1997 թ. հուլիսի 14	2001 թ. հունիսի 15	2010 թ. հունվարի 06	2015 թ. դեկտեմբերի 29
Երբ պետք է ներկայացվեր (ամիս/ամսաթիվ)	1994 թ. հուլիսի 23	1998 թ. հուլիսի 23	2004 թ. հուլիսի 23	2014 թ. հուլիսի 23
Ազգային զեկույց	CERD/C/289/Ad d.2	CERD/C/372/Add.3	CERD/C/ARM/5-6	CERD/C/ARM/7-11
Հարցադրումների ցանկ			CERD/C/ARM/Q/5-6	
Այլընտրանքային տեղեկատվություն միջազգային հասարակական կազմակերպությունների կողմից			Human Rights Monitoring Group of National Minorities (MRMG)	
Այլընտրանքային տեղեկատվություն տեղական հասարակական կազմակերպությունների կողմից				
Այլընտրանքային տեղեկատվություն մարդու իրավունքների պաշտպանության ազգային մարմին կողմից				
Ամփոփ եզրակացություն	CERD/C/304/Ad d.51	CERD/C/61/CO/1	CERD/C/ARM/CO/5-6	

Կոմիտեի ընդհանուր մեկնաբանությունները

Թիվ 1 Ընդհանուր մեկնաբանություն - Անդամ պետությունների պարտավորությունների վերաբերյալ (4-րդ հոդված)

Թիվ 2 Ընդհանուր մեկնաբանություն - Անդամ պետությունների պարտավորությունների վերաբերյալ

Թիվ 3 Ընդհանուր մեկնաբանություն – Անդամ պետությունների կողմից զեկույց ներկայացնելու վերաբերյալ (25-րդ հոդված)

Թիվ 4 Ընդհանուր մեկնաբանություն - Անդամ պետությունների կողմից զեկույց ներկայացնելու վերաբերյալ (1-ին հոդված)

Թիվ 5 Ընդհանուր մեկնաբանություն - Անդամ պետությունների կողմից զեկույց ներկայացնելու վերաբերյալ (7-րդ հոդված)

Թիվ 6 Ընդհանուր մեկնաբանություն - Ուշացրած զեկույցների վերաբերյալ

Թիվ 7 Ընդհանուր մեկնաբանություն - Կոնվենցիայի 4-րդ հոդվածի կիրարկման վերաբերյալ

Թիվ 8 Ընդհանուր մեկնաբանություն - Կոնվենցիայի 1-ին հոդվածի առաջին և չորրորդ մասերի մեկնաբանության և կիրարկման վերաբերյալ

Թիվ 9 Ընդհանուր մեկնաբանություն - Կոնվենցիայի 8-րդ հոդվածի առաջին մասի կիրարկման վերաբերյալ

Թիվ 10 Ընդհանուր մեկնաբանություն - Տեխնիկական աջակցության վերաբերյալ (25-րդ հոդված)

Թիվ 11 Ընդհանուր մեկնաբանություն - Ոչ քաղաքացիների վերաբերյալ

Թիվ 12 Ընդհանուր մեկնաբանություն - Իրավահաջորդ պետությունների վերաբերյալ

Թիվ 13 Ընդհանուր մեկնաբանություն - Մարդու իրավունքների պաշտպանության շուրջ իրավապահ մարմինների վերապատրաստման վերաբերյալ

Թիվ 14 Ընդհանուր մեկնաբանություն - Կոնվենցիայի 1-ին հոդվածի առաջին մասի վերաբերյալ

Թիվ 15 Ընդհանուր մեկնաբանություն - Կոնվենցիայի 4-րդ հոդվածի վերաբերյալ (25-րդ հոդված)

Թիվ 16 Ընդհանուր մեկնաբանություն – Կոնվենցիայի 9-րդ հոդվածի կիրարկման վերաբերյալ

Թիվ 17 Ընդհանուր մեկնաբանություն - Կոնվենցիայի կիրարկումը համակարգելու նպատակով ազգային մարմինների կազմավորման վերաբերյալ (25-րդ հոդված)

Թիվ 18 Ընդհանուր մեկնաբանություն – Մարդկության դեմ հանցագործությունների քննության նպատակով միջազգային տրիբունալ հիմնադրելու վերաբերյալ

Թիվ 19 Ընդհանուր մեկնաբանություն - Կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ

Թիվ 20 Ընդհանուր մեկնաբանություն - Կոնվենցիայի 5-րդ հոդվածի վերաբերյալ

Թիվ 21 Ընդհանուր մեկնաբանություն - Ինքնորոշման իրավունքի վերաբերյալ

Թիվ 22 Ընդհանուր մեկնաբանություն - Կոնվենցիայի 5-րդ հոդվածի վերաբերյալ, փախստականների և տեղահանված անձանց մասով

Թիվ 23 Ընդհանուր մեկնաբանություն - Բնիկ ժողովուրդների իրավունքների վերաբերյալ

Թիվ 24 Ընդհանուր մեկնաբանություն - Կոնվենցիայի 1-ին հոդվածի վերաբերյալ

Թիվ 25 Ընդհանուր մեկնաբանություն - Ռասայական խտրականության գենդերային չափումները

Թիվ 26 Ընդհանուր մեկնաբանություն - Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ

Թիվ 27 Ընդհանուր մեկնաբանություն - Գնչուների նկատմամբ խտրականության վերաբերյալ

Թիվ 28 Ընդհանուր մեկնաբանություն - Ռասիզմի, ռասայական խտրականության, քսենոֆոբիայի և վերաբերելի անհանդուրժողականության դեմ Համաշխարհային կոնֆերանսի հետագա ընթացքին հետևողական լինելու վերաբերյալ (25-րդ հոդված)

Թիվ 29 Ընդհանուր մեկնաբանություն - Կոնվենցիայի 1-ին հոդվածի առաջին մասի վերաբերյալ (Օազում)

Թիվ 30 Ընդհանուր մեկնաբանություն - Ոչ քաղաքացիների նկատմամբ խտրականության վերաբերյալ

Թիվ 31 Ընդհանուր մեկնաբանություն - Ռասայական խտրականության կանխարգելման և քրեական արդարադատության համակարգի կառավարման և իրականացման վերաբերյալ

Թիվ 32 Ընդհանուր մեկնաբանություն - Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման միջազգային կոնվենցիայով նախատեսված հատուկ միջոցների շրջանակը և նշանակությունը (25-րդ հոդված)

Թիվ 33 Ընդհանուր մեկնաբանություն - Վերանայման Դուրբանի կոնֆերանսին հետևողական լինելու վերաբերյալ (25-րդ հոդված)

Թիվ 34 Ընդհանուր մեկնաբանություն - Աֆրիկյան ծագում ունեցող անձանց հանդեպ ռասայական խտրականությունը (25-րդ հոդված)

Թիվ 35 Ընդհանուր մեկնաբանություն - Ռասայական ատելության խոսքի դեմ պայքար (25-րդ հոդված)

Վերաբերելի փաստաթղթեր և հղումներ .

- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա
- Կոմիտեի ընթացակարգային կանոններ
- Կոմիտեի աշխատանքային կարգ

Կայքէջ

- <http://www.ohchr.org/EN/HRBodies/CERD/Pages/CERDIndex.aspx>

4. Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե

Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեն գործում է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի հիման վրա: Այն մշտադիտարկում է պետության կողմից Կոնվենցիայով սահմանված մի շարք իրավունքների իրականացումը:

Կոմիտեի լիազորությունները

Կոմիտեն լիազորված է կատարել մի շարք գործողություններ, որոնք ուղղված են ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի կատարման հանդեպ մշտադիտարկմանը:

Կոմիտեի լիազորությունները հետևյալն են.

- Դիտարկել անդամ -պետությունների պարբերական զեկույցները

Պետության կառավարության պարբերական զեկույցները Կոմիտեն ներկայացվում են յուրաքանչյուր 4 տարին մեկ անգամ և կարող է ներկայացնել Կոմիտեի պահանջով: Առաջին անգամ դիտարկման զեկույցը ներկայացվում է միանալուց/վավերացնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

- Ստանալ և քննարկել.
 - անհատների կամ անհատների խմբերի կողմից կամ նրանց անունից, ովքեր պնդում են մասնակից պետության կողմից՝ Կոնվենցիայում նշված իրենց իրավունքների ոտնահարման մասին, բողոքներ (եթե ենթադրյալ խախտում կատարած պետության կողմից վավերացվել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կամրնտիր արձանագրությունը),
 - մասնակից պետության կողմից Կոնվենցիայում ամրագրված իրավունքների լուրջ և պարբերական խախտումների մասին հավաստի տեղեկատվություն ստանալու դեպքում, առաջարկել մասնակից պետությանը համագործակցել տեղեկատվությունը քննելու գործի շրջանակներում և այդ նպատակով ներկայացնել համապատասխան տեղեկությունների վերաբերյալ դիտարկումներ (այն դեպքում, եթե անդամ-պետությունը վավերացնելով Կամրնտիր արձանագրությունը, վերապահում չի կատարել այն մասին, որ արձանագրության 8-9-րդ հոդվածներով սահմանված Կոմիտեի լիազորությունները չեն տարածվում այդ պետության վրա:)
- Մշակել և ընդունել Ընդհանուր մեկնաբանություններ:

Կոմիտեի գործունեության ձևաչափը

Կոմիտեն կազմված է 23 անկախ փորձագետներից, որոնք գործում են անձնապես: Անդամները ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, պետությունների կողմից առաջադրված թեկնածուների ցանկից: Կոմիտեն յուրաքննայուր տարի գումարում է հերթական նիստեր: Կոմիտեն կարող է գումարել նաև հատուկ նիստեր: Կոմիտեին ուղարկվող փաստաթղթերը պետք է կազմված լինեն Կոմիտեի պաշտոնական լեզուներից որևէ մեկով՝ արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն կամ իսպաներեն: Անհրաժեշտության դեպքում Կոմիտեն կարող է կազմավորել լրացուցիչ մարմիններ՝ ենթակոմիտեներ կամ ad hoc կոմիտեներ: Կոմիտեի և լրացուցիչ մարմինների նիստերը անց են կացվում բաց կերպով, բացառությամբ՝ այն դեպքերի, երբ Կոմիտեն կայացնում է հակառակ որոշումը: Ամփոփ եզրակացությունների, նստաշրջանին նախորդող աշխատանքային խմբերի և այլ աշխատանքային խմբերի քննարկումները տեղի են ունենում դռնփակ կարգով, եթե այլ որոշում չի կայացվել Կոմիտեի կողմից:

Հայաստանի վերաբերյալ իրականացված դիտարկումները և ընդունված եզրափակիչ դիտողությունները կամ հանձնարարականները

Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման միջազգային կոնվենցիան վավերացվել է ՀՀ կողմից 1993 թ. -ին: Այդ թվականից ի վեր Հայաստանը 4 անգամ ենթարկվել է Կոմիտեի կողմից պարբերական դիտարկման: Առաջին դիտարկման ընթացքում Կոմիտեն իր մտահոգություններն է հայտնել կանանց հզորացման և կանանց հանդեպ խտրականության բացառմանն ուղղված ազգային համակարգերի բացակայության վերաբերյալ, ինչպես նաև կանանց հանդեպ բռնության, աշխատաշուկայում կանանց ոչ հավասար հնարավորությունների, ինչպես նաև ոչ ֆորմալ հատվածում աշխատող կանանց համար սոցիալական պաշտպանության և սոցիալական արտոնությունների վերաբերյալ պետական քաղաքականության բացակայության վերաբերյալ: Հետագա դիտարկումների և մասնավորապես 2016 թ. նոյեմբերի 18-ին ընդունված ամփոփ եզրակացություններում Կոմիտեն անդրադարձել է ՀՀ Ազգային ժողովում կանանց ներկայացվածության հիմնախնդրին, խտրականության բացառմանն ուղղված առանձին և համապարփակ օրենսդրության ընդունման, կանանց արդար դատաքնության իրավունքին, կանանց հանդեպ բռնության, կրթության, աշխատանքի և տնտեսական գորեղացման, առողջապահական իրավունքի և այլն: Կարևոր է, որ Կոմիտեն նաև անդրադարձել է խտրականության և կարծրատիպային մոտեցումների առկայությանը, ինչպես նաև կրկնակի խտրականության ենթարկվող կանանց. ծեր, LGBS, հաշմանդամություն ունեցող, պետության հեռավոր մարզերում բնակվող կանանց իրավունքների լիարժեք ապահովման անհրաժեշտությանը:

Անհատական բողոքների քննությունը

Թեև Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը ՀՀ կողմից վավերացվել է 2006 թ. -ին, այնուամենայնիվ ՀՀ քաղաքացիների կողմից անհատական բողոք Կոմիտեին դեռևս չի ներկայացվել:

	1-ին շրջան	2-րդ շրջան	3-4-րդ շրջան	5-6 րդ շրջան
Երբ է ներկայացվել (ամիս/ամսաթիվ)	1994թ. նոյեմբերի 30	1999թ. օգոստոսի 23	2007 թ. դեկտեմբերի 28	2015թ. մարտի 11
Երբ պետք է ներկայացվեր (ամիս/ամսաթիվ)	1994 թ. հոկտեմբերի 13	1998 թ. հոկտեմբերի 13	2002 թ. հոկտեմբերի 13	2013 թ. հոկտեմբերի 13
Ազգային զեկույց	CEDAW/C/ARM/1	CEDAW/C/AR M/2	CEDAW/C/AR M/4	CEDAW/C/ARM/5-6
Հարցադրումների ցանկ			CEDAW/C/AR M/Q/4	CEDAW/C/ARM/Q /5-6
Այլընտրանքային տեղեկատվություն միջազգային հասարակական կազմակերպությունների կողմից				<p>Anti-Discrimination Centre Memorial and Institute of Civil Society (Armenia) (Submission for the pre-session)</p> <p>Armenian Association of Women with University Education (submission for the session)</p> <p>Caucasus Center of Human Rights Monitoring (submission for the session)</p> <p>CEDAW Task Force Armenia (submission for the session)</p> <p>Global Initiative to End All Corporal Punishment of Children (submission for the</p>

				pre session
Այլընտրանքային տեղեկատվություն տեղական հասարակական կազմակերպությունների կողմից			Armenian Association of Women with University Education Democracy Today and All Armenian Union of Women	Civil Society Institute and Anti-discrimination Centre Memorial (submission for the session) Civil Society Organizations (joint submission for the session)
Այլընտրանքային տեղեկատվություն մարդու իրավունքների պաշտպանության ազգային մարմին կողմից				Office of the Human Rights Defender of the Republic of Armenia (submission for the session)
Ամփոփ եզրակացություն	A/52/38/Rev.1,Part II paras.35-68 A/52/38/REV.1(SUPP) paras. 35-68	A/57/38(PartIII) paras. 37-69	<u>CEDAW/C/AR</u> <u>M/CO/4</u>	CEDAW/C/ARM/C O/5-6

Կոմիտեի ընդհանուր մեկնաբանությունները

Թիվ 1 Ընդհանուր մեկնաբանություն – Զեկույցների ներկայացման ուղեցույց

Թիվ 2 Ընդհանուր մեկնաբանություն - Զեկույցների ներկայացման ուղեցույց

Թիվ 3 Ընդհանուր մեկնաբանություն - Կրթությունը և հանրային տեղեկատվության ծրագրեր

Թիվ 4 Ընդհանուր մեկնաբանություն - Վերապահումներ

Թիվ 5 Ընդհանուր մեկնաբանություն - Ժամանակավոր հատուկ միջոցներ

Թիվ 6 Ընդհանուր մեկնաբանություն - Արդյունավետ ազգային մեխանիզմները և հրապարակայնությունը

Թիվ 7 Ընդհանուր մեկնաբանություն - Ռեսուրսները

Թիվ 8 Ընդհանուր մեկնաբանություն - 8-րդ հոդված

Թիվ 9 Ընդհանուր մեկնաբանություն - Վիճակագրական տվյալներ

Թիվ 10 Ընդհանուր մեկնաբանություն - Կոնվենցիայի ընդունման 10-րդ տարելից

Թիվ 11 Ընդհանուր մեկնաբանություն - Տեխնիկական խորհրդատվություն գեկոյցների ներկայացման ընթացքում

Թիվ 12 Ընդհանուր մեկնաբանություն - Կանանց հանդեպ բռնությունը

Թիվ 13 Ընդհանուր մեկնաբանություն - Համարժեք աշխատանքի դիմաց հավասար փոխհատուցում

Թիվ 14 Ընդհանուր մեկնաբանություն - Կանանց թլփատումը

Թիվ 15 Ընդհանուր մեկնաբանություն - Կանայք և ՄԻԱՎ-ը

Թիվ 16 Ընդհանուր մեկնաբանություն - Չվարձատրվող աշխատող կանայք գյուղական և քաղաքային ընտանեկան տնտեսություններում

Թիվ 17 Ընդհանուր մեկնաբանություն - Կանանց կողմից իրականացվող չվարձատրվող տնային գործունեության չափումը և քանակական արժեքը և ճանաչումը Համախառն ազգային արդյունքի մեջ

Թիվ 18 Ընդհանուր մեկնաբանություն - Հաշմանդամություն ունեցող կանայք

Թիվ 19 Ընդհանուր մեկնաբանություն - Կանանց հանդեպ բռնությունները

Թիվ 20 Ընդհանուր մեկնաբանություն - Վերապահումները

Թիվ 21 Ընդհանուր մեկնաբանություն - Հավասարությունը ամուսնության ընթացքում և ընտանեկան հարաբերություններում

Թիվ 22 Ընդհանուր մեկնաբանություն - Կոնվենցիայի 20-րդ հոդված

Թիվ 23 Ընդհանուր մեկնաբանություն - Կանայք քաղաքական և հանրային կյանքում

Թիվ 24 Ընդհանուր մեկնաբանություն - Կանայք և առողջությունը

Թիվ 25 Ընդհանուր մեկնաբանություն - Ժամանակավոր հատուկ միջոցներ

Թիվ 26 Ընդհանուր մեկնաբանություն - Կին միգրանտ աշխատողները

Թիվ 27 Ընդհանուր մեկնաբանություն - Տարեց կանայք և նրանց մարդու իրավունքների պաշտպանությունը

Թիվ 28 Ընդհանուր մեկնաբանություն - Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման 2-րդ հոդվածով սահմանված առանցքային պարտականությունները

Թիվ 29 Ընդհանուր մեկնաբանություն - Ամուսնության, ընտանեկան հարաբերությունների և դրանց դադարեցման տնտեսական հետևանքները

Թիվ 30 Ընդհանուր մեկնաբանություն - Կոնֆլիկտի կանխարգելման, կոնֆլիկտի և հետկոնֆլիկտային իրավիճակներում կանանց վերաբերյալ

Թիվ 31 Ընդհանուր մեկնաբանություն – Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման Կոմիտեի և Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի համատեղ Ընդհանուր մեկնաբանությունները վնասակար գործելակերպի վերաբերյալ

Թիվ 32 Ընդհանուր մեկնաբանություն - Փախստական, ապաստան հայցող, ազգություն և քաղաքացիություն չունեցող կանանց զենդեռային չափումների վերաբերյալ

Թիվ 33 Ընդհանուր մեկնաբանություն – Կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ

Թիվ 34 Ընդհանուր մեկնաբանություն - Գյուղական համայնքներում բնակվող կանանց իրավունքների վերաբերյալ

Վերաբերելի փաստաթղթեր և հղումներ .

- Պ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա
- Պ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կամրնտիր արձանագրություն
- Պ Ընթացակարգային կանոններ
- Պ Աշխատանքային կարգ

Կայքէջ՝

- Պ <http://www.ohchr.org/EN/HRBodies/CEDAW/Pages/CEDAWIndex.aspx>

5. Խոշտանգումների դեմ պայքարի կոմիտե

Խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեն գործում է Խոշտանգումների, այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ կոնվենցիայի հիման վրա: Այն մշտադիտարկում է պետության կողմից Կոնվենցիայի իրականացումը: Կոնվենցիայով ամրագրվում է յուրաքանչյուր անձի՝ խոշտանգումներից զերծ մնալու իրավունքը: Կոնվենցիայի իմաստով «խոշտանգում» հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ հոգեկան ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից միայն կամ հատուկ են դրանց:

Կոմիտեի լիազորությունները

Կոմիտեն լիազորված է կատարել մի շարք գործողություններ, որոնք ուղղված են ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ Կոնվենցիայի կատարման հանդեպ մշտադիտարկմանը:

Կոմիտեի լիազորությունները հետևյալն են.

- Դիտարկել անդամ-պետությունների պարբերական զեկույցները: Պարբերական զեկույցները պետության կառավարության կողմից ներկայացնում են Կոմիտեի կողմից յուրաքանչյուր 4 տարին մեկ անգամ, և այն ժամանակ, երբ կպահանջի Կոմիտեն: Առաջին անգամ դիտարկման զեկույցը ներկայացվում է միանալուց/վավերացնելուց հետո մեկ տարվա ընթացքում:
- Ստանալ և քննության առնել.

- հաղորդումներ այն անձանցից կամ նրանց անունից, ովքեր պնդում են, թե իրենք մասնակից պետության կողմից Կոնվենցիայի դրույթների խախտման գոհ են (եթե ենթադրյալ խախտում կատարած պետությունը հայտարարել է այն մասին, որ նա ճանաչել է Կոմիտեի տվյալ իրավասությունը);
- մասնակից պետության հայտարարությունն այն մասին, թե մեկ այլ մասնակից պետություն չի կատարում Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունները (այն դեպքում, եթե այս երկու մասնակից պետությունները հայտարարել են, այն մասին որ նրանք ճանաչում են Կոմիտեի տվյալ իրավասությունը);
- Կոմիտեն կարող է ստանալ վստահելի տեղեկատվություն, որը, նրա կարծիքով, պարունակում է հիմնավորված ցուցումներ, թե մասնակից պետություններից որևէ մեկի տարածքում կանոնավոր կերպով կիրառվում են խոշտանգումներ: Այս դեպքում Կոմիտեն առաջարկում է տվյալ մասնակից պետությանն համագործակցել այդ տեղեկատվության քննարկման հարցում և այդ նպատակով ներկայացնել իր դիտողությունները տվյալ տեղեկատվության վերաբերյալ:
- Մշակել և ընդունել Ընդհանուր մեկնաբանություններ:

Կոմիտեի կազմը և գործունեության ձևաչափը

Խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեն կազմված է 10 անկախ փորձագետներից, որոնք գործում են անձնապես: Անդամները ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, պետությունների կողմից առաջադրված թեկնածուների ցանկից: Կոմիտեն յուրաքանչյուր տարի երեք անգամ գումարում է հերթական նիստեր: Կոմիտեն ուղարկվող փաստաթղթերը պետք է կազմված լինեն Կոմիտեի պաշտոնական լեզուներից որևէ մեկով՝ արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն կամ իսպաներեն: Հնարավորության դեպքում այդ լեզուները կարող են լինել նաև աշխատանքային: Անհրաժեշտության դեպքում Կոմիտեն կարող է կազմավորել լրացուցիչ մարմիններ: Կոմիտեի և լրացուցիչ մարմինների նիստերը անցկացվում են բաց կերպով, բացառությամբ՝ Կոմիտեի ընթացակարգային կանոններով սահմանված դեպքերի կամ այն դեպքերի, երբ Կոմիտեն կայացրել է այլ որոշում:

Հայաստանի վերաբերյալ իրականացված դիտարկումները և ընդունված եզրափակիչ դիտողությունները կամ հանձնարարականները

Խոշտանգումների, այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ կոնվենցիան Հայաստանի կողմից վավերացվել է կողմից 1993թ-ին: Մինչ օրս ՀՀ ենթարկվել է Կոմիտեի պարբերական դիտարկմանը թվով 3 անգամ: ՀՀ կառավարության կողմից ներկայացված հերթական ազգային զեկույցի քննարկումը տեղի է ունեցել է 2016 թ. նոյեմբերի 23-ին Կոմիտեի 59-րդ նստաշրջանի ընթացքում: ՀՀ վերաբերյալ ընդունված ամփոփ եզրակացություններում Կոմիտեն առաջին դիտարկման ընթացքում սահմանափակ թվով մտահոգություններ է հայտնել, մասնավորապես՝ շեշտադրելով քրեական օրենսդրությամբ «խոշտանգում» հանցակազմի պատշաճ սահմանման անհրաժեշտությունը, անձի այլ պետություն հանձնելու թույլատրելիության կարգավորման խնդիրը, այն դեպքում, երբ այլ պետությունում նրանց սպառնում է վատ վերաբերմունքի ենթարկվելու վտանգը, ոստիկանության բաժիններում անձի վատ վերաբերմունքի ենթարկվելու հիմնախնդիրները: Հետագայում Կոմիտեն անդրադարձել է ոստիկանության բաժիններում, բանակում խոշտանգումների կիրառման հիմնախնդիրներին, խոշտանգումների կիրառման դեպքերում պատշաճ, մանրակրկիտ և անկողմնակալ քննություն իրականացնելու, անազատության մեջ գտնվող անձանց մահացությունների, խտրականության հնարավոր զոհերի պաշտպանության ինչպես նաև իրավունքի խախտման դիմաց արդարացի փոխհատուցում ստանալու, ռեաբիլիտացիայի, դատարանների անկախության, քրեակատարողական հիմնարկներում պահման պայմանների հիմնախնդիրներին: Կոմիտեն նաև անդրադարձել է կանանց նկատմամբ բռնությունների և անչափահասների արդարադատության հետ կապված հիմնախնդիրներին:

	1-ին շրջան	2-րդ շրջան	3-րդ շրջան	4-րդ շրջան
Երբ է ներկայացվել (ամիս/ամսաթիվ)	1995 թ. դեկտեմբերի 21	1999թ. հունիսի 15	2009 թ. դեկտեմբերի 22	2015թ. հունիսի 24
Երբ պետք է ներկայացվեր (ամիս/ամսաթիվ)	1994թ. հոկտեմբերի 12	1998թ. հոկտեմբերի 12	2002թ. հոկտեմբերի 12	2016թ. հունիսի 01
Ազգային զեկույց	CAT/C/24/Add.4 /Rev.1 paras. 84 - 101	CAT/C/43/Add.3	CAT/C/ARM/3	CAT/C/ARM/4
Հարցադրումների ցանկ			CAT/C/ARM/Q/3	

Այլընտրանքային տեղեկատվություն միջազգային հասարակական կազմակերպությունների կողմից				HR Education and Res. Public Ass. and Citizens` Labour Rights Protection League (revised) Caucasus Center of Human Rights Monitoring (CCHRM)
Այլընտրանքային տեղեկատվություն տեղական հասարակական կազմակերպությունների կողմից			Info from Civil Society Organizations Info from Civil Society Organizations Info from Civil Society Organizations Info from Civil Society Organizations Info from Civil Society Organizations Info from Civil Society Organizations Info from Civil Society Organizations Info from Civil Society Organizations Info from Civil Society Organizations	Civil Society Institute_submission on Armenia Foundation Against the Violation of Law_submission on Armenia Partnership for Open Society Initiative joint submission on Armenia
Այլընտրանքային տեղեկատվություն մարդու իրավունքների պաշտպանության ազգային մարմին կողմից				
Ամփոփ եզրակացություն	A/51/44(SUPP) paras. 84-101	A/56/44 paras. 33-39	CAT/C/ARM/GO/3	

Կումիտեի ընդհանուր մեկնաբանությունները

Թիվ 1 Ընդհանուր մեկնաբանություն - Կոնվենցիայի 3-րդ հոդվածի կիրարկումը 22-րդ հոդվածի լույսի ներքո

Թիվ 2 Ընդհանուր մեկնաբանություն - Կոնվենցիայի 2-րդ հոդվածի կիրարկումը անդամ պետությունների կողմից

Թիվ 3 Ընդհանուր մեկնաբանություն - 14 հոդվածի կիրարկումը անդամ պետությունների կողմից

Վերաբերելի փաստաթղթեր և հղումներ .

- Պ [Խոշտանգումների, այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ կոնվենցիա](#)
- Պ [Խոշտանգումների, այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ կոնվենցիայի կամրնտիր արձանագրություն](#)
- Պ [Ընթացակարգային կանոններ](#)
- Պ [Աշխատանքային կարգ](#)

Կայքէջ՝

- Պ <http://www.ohchr.org/en/hrbodies/cat/pages/catindex.aspx>

6. Երեխայի իրավունքների հարցերով կոմիտե

Երեխաների իրավունքների հարցերով կոմիտեն գործում է Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի հիման վրա: Այն մշտադիտարկում է պետության կողմից Կոնվենցիայի, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից՝ զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամրնտիր արձանագրությամբ սահմանված պարտականությունների կատարման վերաբերյալ և Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամրնտիր արձանագրության իրականացումը:

Կոմիտեի լիազորությունները

Կոմիտեն լիազորված է կատարել մի շարք գործողություններ, որոնք ուղղված են ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման հանդեպ մշտադիտարկմանը:

Կոմիտեի լիազորությունները հետևյալն են .

- Դիտարկել անդամ պետությունների պարբերական զեկույցները

Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով սահմանված պարտականությունների կատարման վերաբերյալ պարբերական զեկույցները Պետության կառավարության կողմից ներկայացվում են Կոմիտեի կողմից յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ, և այն ժամանակ, երբ կպահանջի Կոմիտեն: Առաջին անգամ դիտարկման զեկույցը ներկայացվում է միանալուց/վավերացնելուց հետո երկու տարվա ընթացքում: Կոմիտեն նաև քննարկում է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից՝ զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամրնտիր արձանագրությամբ սահմանված պարտականությունների կատարման վերաբերյալ և Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամրնտիր արձանագրության կատարման վերաբերյալ արձանագրությունները վավերացրած պետությունների նախնական զեկույցները:

- Ստանալ և քննության առնել
 - հաղորդումներ տվյալ պետության իրավազորության ներքո գտնվող այն անձանցից կամ նրանց անունից, ովքեր պնդում են, թե իրենք մասնակից պետության կողմից Կոնվենցիայի, և/կամ դրան կից առաջին և երկրորդ արձանագրությունների դրույթների խախտման գոհ են (ան դեպքում, եթե ենթադրյալ խախտում կատարած պետությունը վավերացրել է Կոնվենցիայի 3-րդ կամրնտիր արձանագրությունը),
 - մասնակից պետության հայտարարությունն այն մասին, թե մեկ այլ մասնակից պետություն չի կատարում սույն Կոնվենցիայով և/կամ դրան կից առաջին և երկրորդ արձանագրություններով ստանձնած իր

պարտավորությունները (այն դեպքում, եթե այս երկու մասնակից պետությունները վավերացրել են Կոնվենցիային կից 3-րդ կամընտիր արձանագրությունը և հայտարարել են այն մասին, որ նրանք ճանաչում են Կոմիտեի տվյալ իրավասությունը),

- Կոմիտեն կարող է ստանալ վստահելի տեղեկատվություն, որը, նրա կարծիքով պարունակում է հիմնավորված ցուցումներ, թե մասնակից պետություններից որևէ մեկի տարածքում կանոնավոր կերպով խախտում են Կոնվենցիայով և/կամ դրան կից առաջին և երկրորդ արձանագրություններով ստանձնած իր պարտավորությունները: Այս դեպքում Կոմիտեն տվյալ մասնակից պետությանն առաջարկում է համագործակցել այդ տեղեկատվության քննարկման հարցում և այդ նպատակով ներկայացնել իր դիտողությունները տվյալ տեղեկատվության վերաբերյալ:
- Ընդունել Ընդհանուր մեկնաբանություններ

Կոմիտեի գործունեության ձևաչափը

Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեն կազմված է 18 անկախ փորձագետներից, որոնք գործում են անձնապես: Անդամները ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, պետությունների կողմից առաջադրված թեկնածուների ցանկից: Կոմիտեում յուրաքննաչուր տարի երեք անգամ գումարում է հերթական նիստեր, կարող են գումարվել նաև հատուկ նիստեր: Կոմիտեի պաշտոնական լեզուներն են արաբերենը, չինարենը, անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը և իսպաներենը, կոմիտեի աշխատանքային լեզուներն են՝ անգլերենը, ֆրանսերենը և իսպաներենը: Կոմիտեին ուղարկվող փաստաթղթերը պետք է կազմված լինեն այս լեզուներից որևէ մեկով: Անհրաժեշտության դեպքում Կոմիտեն կարող է կազմավորել լրացուցիչ մարմիններ: Կոմիտեի և լրացուցիչ մարմինների նիստերը անց են կացվում բաց կերպով, բացառությամբ այն դեպքերի, երբ Կոմիտեն կայացրել է այլ որոշում:

Հայաստանի վերաբերյալ իրականացված դիտարկումները և ընդունված եզրափակիչ դիտողությունները կամ հանձնարարականները

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան վավերացվել է ՀՀ կողմից 1993 թ. -ին: Հայաստանը դիտարկման է ենթարկվել 3 անգամ: Նախնական դիտարկման արդյունքում ընդունված իր ամփոփ եզրակացություններում Կոմիտեն անդրադարձել է երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված բավարար օրենսդրական

երաշխիքների, ազգային քաղաքականության և ձեռնարկվող միջոցառումների պատշաճ համակարգման, մշտադիտարակման մեխանիզմների, ֆինանսական ռեսուրսների հատկացման, խտրականության բացառման, երեխայի տեսակետները հարգելու, առողջության, կրթության, վատ վերաբերմունքի ենթարկվելու, տնտեսական շահագործման, անչափահասների արդարադատության և մի շարք այլ հիմնախնդիրների:

Հետագայում ընդունված ամփոփ եզրակացություններով Կոմիտեն, ի թիվս վերոնշյալ խնդիրների, իր մտահոգություններն է հայտնել և հանձնարարականներ է ներկայացրել այնպիսի հիմնախնդիրների վերաբերյալ, ինչպիսիք են. երեխայի կրոնի և հավատքի ազատությունը, երեխայի ծնունդի գրանցման և քաղաքացիության, ընտանեկան միջավայրում ապրելու և այլընտրանքային խնամքի, որդեգրման, հաշմանդամություն ունեցող երեխաների, փախստական, ապաստան հայցող և առանց ուղեկցողի երեխաների իրավունքները:

	1-ին շրջան	2-րդ շրջան	3-4-րդ շրջաններ	5-6-րդ շրջաններ
Երբ է ներկայացվել (ամիս/ամսաթիվ)	1997 թ. փետրվարի 19	2002 թ. փետրվարի 21	2010 թ. փետրվարի 04	
Երբ պետք է ներկայացվեր (ամիս/ամսաթիվ)	1995թ. հուլիսի 21	2000 թ. հուլիսի 21	2009 թ. հուլիսի 22	2019թ. հունվարի 22
Ազգային զեկուլց	CRC/C/28/Add.9	CRC/C/93/Add.6	CRC/C/ARM/3-4	
Հարցադրումների ցանկ		CRC/C/Q/ARM/2	CRC/C/ARM/Q/3-4	
Այլընտրանքային տեղեկատվություն միջազգային հասարակական կազմակերպությունների կողմից			Global Initiative to End All Corporal Punishment of Children (presession) International Baby Food	

			Action Network (IBFAN): Annex (presession)	
			International Baby Food Action Network (IBFAN): Report (presession)	
Այլընտրանքային տեղեկատվություն տեղական հասարակական կազմակերպությունների կողմից				
Այլընտրանքային տեղեկատվություն մարդու իրավունքների պաշտպանության ազգային մարմին կողմից				
Սամփոփ եզրակացություն	CRC/C/15/Add.119	CRC/C/15/Add.2 25	CRC/C/ARM/CO/3-4	

Կոմիտեի ընդհանուր մեկնաբանությունները

Թիվ 1 Ընդհանուր մեկնաբանություն - Կրթության նպատակները

Թիվ 2 Ընդհանուր մեկնաբանություն - Մարդու իրավունքների պաշտպանության ազգային անկախ մեխանիզմների դերը երեխայի իրավունքների խրախուսման և պաշտպանության շրջանակներում

Թիվ 3 Ընդհանուր մեկնաբանություն - ՄԻԱԿ/ՉԻԱՀ-ը և երեխաների իրավունքները

Թիվ 4 Ընդհանուր մեկնաբանություն – Դեռահասների իրավունքները և զարգացումը Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայի լույսի ներքո

Թիվ 5 Ընդհանուր մեկնաբանություն – Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրարկման ընդհանուր միջոցները

Թիվ 6 Ընդհանուր մեկնաբանություն - Վերաբերմունքը առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխայի հանդեպ իր ծագման երկրից այլ երկրում

Թիվ 7 Ընդհանուր մեկնաբանություն - Երեխայի իրավունքների իրականացումը վաղ մանկության ընթացքում

Թիվ 8 Ընդհանուր մեկնաբանություն - Երեխայի պաշտպանությունը մարմնական կամ այլ դաժան արժանապատվությունը նվաստացնող պատժից

Թիվ 9 Ընդհանուր մեկնաբանություն - Հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքները

Թիվ 10 Ընդհանուր մեկնաբանություն - Երեխաների իրավունքները անչափահասների արդարադատության շրջանակներում

Թիվ 11 Ընդհանուր մեկնաբանություն - Բնիկ երեխաները և Կոնվենցիայով ամրագրված նրանց իրավունքները

Թիվ 12 Ընդհանուր մեկնաբանություն - Լսված լինելու երեխայի իրավունքը

Թիվ 13 Ընդհանուր մեկնաբանություն - Բռնության ցանկացած տեսակից զերծ մնալու երեխայի իրավունքը (25-րդ հոդված)

Թիվ 14 Ընդհանուր մեկնաբանություն - Երեխայի իրավունքը, որպեսզի նրա լավագույն շահերը առաջնահերթ ուշադրության արժանանան (3-րդ հոդվածին առաջին մաս)

Թիվ 15 Ընդհանուր մեկնաբանություն - Երեխայի առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը (24-րդ հոդված)

Թիվ 16 Ընդհանուր մեկնաբանություն - Պետությունների պարտավորությունները կապված երեխայի իրավունքների վրա բիզնես ոլորտի ազդեցության վերաբերյալ (25-րդ հոդված)

Թիվ 17 Ընդհանուր մեկնաբանություն - Երեխայի հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին ու զվարճալի միջոցառումներին և մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու և արվեստով զբաղվելու իրավունքի վերաբերյալ (31-րդ հոդված)

Թիվ 18 Ընդհանուր մեկնաբանություն - Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման Կոմիտեի և Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի համատեղ Ընդհանուր մեկնաբանությունները վնասակար գործելակերպի վերաբերյալ

Թիվ 19 Ընդհանուր մեկնաբանություն - Երեխայի իրավունքների պաշտպանության նպատակով հանրային բյուջետային միջոցների հատկացման մասին (4-րդ հոդված)

Վերաբերելի փաստաթղթեր և հղումներ .

- Պ Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա
- Պ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից՝ զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամրնտիր արձանագրությամբ սահմանված պարտականությունների կատարման վերաբերյալ
- Պ Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության եվ մանկական պոռնոգրաֆիայի մասին կամրնտիր արձանագրության կատարման վերաբերյալ
- Պ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կամրնտիր արձանագրությունը հաղորդումների ներկայացման ընթացակարգում երեխայի իրավունքների վերաբերյալ
- Պ Ընթացակարգային կանոններ
- Պ Աշխատանքային կարգ

Կայքէջ՝ <http://ohchr.org/EN/HRBodies/CRC/Pages/CRCIndex.aspx>

7. Միգրանտ աշխատողների իրավունքների կոմիտե

Միգրանտ աշխատողների իրավունքներով կոմիտեն գործում է Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիայի հիման վրա: Այն մշտադիտարկում է պետության կողմից Կոնվենցիայի իրականացումը:

Կոմիտեի լիազորությունները

Կոմիտեն լիազորված է կատարել մի շարք գործողություններ, որոնք ուղղված են Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիայի կատարման հանդեպ մշտադիտարկմանը:

Կոմիտեի լիազորությունները հետևյալն են.

- Դիտարկել անդամ- պետությունների պարբերական զեկույցները Միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիայով սահմանված պարտականությունների կատարման վերաբերյալ պարբերական զեկույցները պետության կառավարության կողմից ներկայացնում են կառավարության կողմից յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ: Առաջին անգամ դիտարկման զեկույցը ներկայացվում է միանալուց/վավերացնելուց հետո մեկ տարվա ընթացքում: Դիտարկման ընթացքում Կոմիտեն կարող է նաև լրացուցիչ տեղեկատվություն պահանջել Կառավարությունից:

- Ստանալ և քննության առնել
 - տվյալ պետության իրավագործության ներքո գտնվող այն անձանցից կամ նրանց անունից, ովքեր պնդում են, թե իրենք մասնակից պետության կողմից Կոնվենցիայի դրույթների խախտման զոհ են (ան դեպքում, եթե ենթադրյալ խախտում կատարած պետությունը հայտարարել է, որ այն ճանաչում է Կոմիտեի տվյալ իրավասությունը).
- Ընդունել Ընդհանուր մեկնաբանություններ

Կոմիտեի կազմը և գործունեության ձևաչափը

Միգրանտ աշխատողների իրավունքների կոմիտեն կազմված է 14 անկախ փորձագետներից, որոնք գործում են անձնապես: Անդամները ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, պետությունների կողմից առաջադրված թեկնածուների ցանկից: Կոմիտեն յուրաքանչյուր տարի երեք անգամ գումարում է հերթական նիստեր: Կարող են գումարվել նաև հատուկ նիստեր: Կոմիտեի պաշտոնական և աշխատանքային լեզուներն են արաբերենը, չինարենը, անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը և իսպաներենը: Կոմիտեին ուղարկվող փաստաթղթերը պետք է կազմված լինեն այս լեզուներից որևէ մեկով: Կոմիտեի և լրացուցիչ մարմինների նիստերը անցկացվում են բաց կերպով, բացառությամբ՝ այն դեպքերի, երբ Կոմիտեն կայացրել է այլ որոշում:

Հայաստանի վերաբերյալ իրականացված դիտարկումները և ընդունված եզրակացիչ դիտողությունները կամ հանձնարարականները

Միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիան ստորագրվել է ՀՀ կողմից 2013 թ. -ին, սակայն դեռևս չի վավերացվել:

Կոմիտեի ընդհանուր մեկնաբանությունները

Թիվ 1 Ընդհանուր մեկնաբանություն - Տնային աշխատող միգրանտների վերաբերյալ
Թիվ 2 Ընդհանուր մեկնաբանություն - Անսովոր իրավիճակում միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների վերաբերյալ
Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի և Միգրանտ աշխատողների իրավունքների կոմիտեի համատեղ Ընդհանուր մեկնաբանություն – Երեխայի մարդու իրավունքները միջազգային միգրացիայի համատեքստում

Վերաբերելի փաստաթղթեր և հղումներ .

Պ Միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիա

Կայքէջ՝

Պ <http://www.ohchr.org/EN/HRBodies/CMW/Pages/CMWIndex.aspx>

8. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով կոմիտե

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով կոմիտեն գործում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի լրացուցիչ արձանագրության հիման վրա: Այն մշտադիտարկում է պետության կողմից Կոնվենցիայի իրականացումը:

Կոմիտեի լիազորությունները

Կոմիտեն լիազորված է կատարել մի շարք գործողություններ, որոնք ուղղված են ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման հանդեպ մշտադիտարկմանը:

Կոմիտեի լիազորությունները հետևյալն են.

- Դիտարկել անդամ պետությունների պարբերական զեկույցները

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով սահմանված պարտականությունների կատարման վերաբերյալ պարբերական զեկույցները պետության կառավարության կողմից ներկայացվում են Կոմիտեին յուրաքանչյուր 4 տարին մեկ անգամ, և այն ժամանակ, երբ կպահանջի Կոմիտեն: Առաջին անգամ դիտարկման զեկույցը ներկայացվում է միանալուց/վավերացնելուց հետո երկու տարվա ընթացքում:

- Ստանալ և քննության առնել
 - հաղորդումներ տվյալ պետության իրավազորության ներքո գտնվող այն անձանցից կամ նրանց անունից, ովքեր պնդում են, թե իրենք մասնակից պետության կողմից Կոնվենցիայի, և/կամ դրան կից առաջին և երկրորդ արձանագրությունների դրույթների խախտման գոհ են (այն դեպքում, եթե ենթադրյալ խախտում կատարած պետությունը վավերացրել է Կոնվենցիայի կամ ընտիր արձանագրությունը)
- ստանալ վստահելի տեղեկատվություն, պարունակում է հիմնավորված ցուցումներ, թե մասնակից պետություններից որևէ մեկի տարածքում կանոնավոր կերպով խախտում են Կոնվենցիայով և/կամ դրան կից առաջին և

երկրորդ արձանագրություններով ստանձնած իր պարտավորությունները: Նման դեպքում Կոմիտեն տվյալ մասնակից պետությանն առաջարկում է համագործակցել այդ տեղեկատվության քննարկման հարցում և այդ նպատակով ներկայացնել իր դիտողությունները տվյալ տեղեկատվության վերաբերյալ (այն դեպքում, եթե ենթադրյալ խախտում կատարած պետությունը վավերացրել է Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը)

- Մշակել և ընդունել Ընդհանուր մեկնաբանություններ

Կոմիտեի գործունեության կազմը և ձևաչափը

Կոմիտեն կազմված է 18 անկախ փորձագետներից, որոնք գործում են անձնապես: Անդամները ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, պետությունների կողմից առաջադրված թեկնածուների ցանկից: Կոմիտեն ամեն տարի երեք անգամ գումարում է հերթական նիստեր / կարող են գումարվել նաև հատուկ նիստեր/: Կոմիտեի պաշտոնական լեզուներն են արաբերենը, չինարենը, անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը և իսպաներենը, իսկ աշխատանքային լեզուները ներառում են թե՛ խոսքային լեզուներ, թե՛ ոչ խոսքային, ինչպիսին է, օրինակ, ժեստերի լեզուն: Այնուամենայնիվ, կոմիտեին ուղարկվող փաստաթղթերը պետք է կազմված լինեն պաշտոնական լեզուներից որևէ մեկով: Անհրաժեշտության դեպքում Կոմիտեն կարող է կազմավորել լրացուցիչ մարմիններ: Կոմիտեի և աշխատանքային խմբերի նիստերը անցկացվում են բաց կերպով, բացառությամբ՝ այն դեպքերի, երբ Կոմիտեն կայացրել է այլ որոշում կամ այլ բան նախատեսված է Ընթացակարգային կանոններով:

Հայաստանի վերաբերյալ իրականացված դիտարկումները և ընդունված եզրափակիչ դիտողությունները կամ հանձնարարականները

Հայաստանը Կոնվենցիան վավերացրել է 2010 թվականին: Կամընտիր արձանագրությունը Հայաստանի կողմից չի վավերացվել, ինչը նշանակում է, որ Կոմիտեն չի կարող ստանալ և քննել Հայաստանի դեմ ուղղված հաղորդումները: ՀՀ կառավարության կողմից ներկայացված առաջին պարբերական զեկույցը դեռևս չի դիտարկվել Կոմիտեի կողմից: Այժմ այն գտնվում է դիտարկման ընթացքում:

	1-ին շրջան
Երբ է ներկայացվել (ամիս/ամսաթիվ)	2013թ. հունվարի 22
Երբ պետք է ներկայացվեր (ամիս/ամսաթիվ)	2010թ. հոկտեմբերի 22
Ազգային զեկույց	CRPD/C/ARM/1
Հարցադրումների ցանկ	CRPD/C/ARM/Q/1
Այլընտրանքային տեղեկատվություն միջազգային հասարակական կազմակերպությունների կողմից	
Այլընտրանքային տեղեկատվություն տեղական հասարակական կազմակերպությունների կողմից	The Helsinki Citizens Assembly-Vanadzor-Alternative Report on Armenia Helsinki Citizens Assembly Vanadzor & Open Society Foundations Armenia Human Rights Defender-Armenia-List of issues National Disability Advocacy Coalition of Disabled Persons Organisations
Այլընտրանքային տեղեկատվություն մարդու իրավունքների պաշտպանության ազգային մարմին կողմից	
Ամփոփ եզրակացություն	

Կոմիտեի ընդհանուր մեկնաբանությունները

[Թիվ 1 Ընդհանուր մեկնաբանություն](#) - Օրենքի առջև հավասարությունը (12-րդ հոդված)

[Թիվ 2 Ընդհանուր մեկնաբանություն](#) - Մատչելիություն (9-րդ հոդված)

[Թիվ 3 Ընդհանուր մեկնաբանություն](#) - Հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները (6-րդ հոդված)

[Թիվ 4 Ընդհանուր մեկնաբանություն](#) - Ներառական կրթության իրավունքը (24-րդ հոդված)

[Թիվ 5 Ընդհանուր մեկնաբանություն](#) - Անկախ ապրելու իրավունքը (19-րդ հոդված) /դեռևս ընդունված չէ/

- Պ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա
- Պ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի արձանագրության լրացուցիչ արձանագրություն
- Պ Կոմիտեի ընթացակարգային կանոններ

Կայքէջ՝

- Պ <http://www.ohchr.org/EN/HRBodies/CRPD/Pages/CRPDIndex.aspx>

9. Բոնությամբ անհետացման հարցերով կոմիտե

Բոնությամբ անհետացման հարցերով կոմիտեն գործում է Բոնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիայի հիման վրա: Այն մշտադիտարկում է պետության կողմից Կոնվենցիայի իրականացումը:

Կոմիտեի լիազորությունները

Կոմիտեն լիազորված է կատարել մի շարք գործողություններ, որոնք ուղղված են ՄԱԿ-ի անդամ պետությունների Բոնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին կոնվենցիայի կատարման հանդեպ մշտադիտարկմանը:

Կոմիտեի լիազորությունները հետևյալն են.

- Դիտարկել անդամ -պետությունների զեկույցները

Բոնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիայով սահմանված պարտականությունների կատարման վերաբերյալ զեկույցները պետության կառավարության կողմից ներկայացնում են Կոնվենցիային միանալուց կամ այն վավերացնելուց հետո 2 տարվա ընթացքում:

- Ստանալ և քննության առնել
 - անհետացած անձի որոնման և գտնվելու վայրը պարզելու վերաբերյալ հարցում՝ որպես հրատապ հարց, որը կարող է Կոմիտեին ներկայացվել անհետացած անձի հարազատների, նրանց իրավական ներկայացուցիչների, պաշտպանների կամ նրանց կողմից լիազորված այլ անձի կողմից, ինչպես նաև օրինական շահ ունեցող որևէ անձի կողմից,
 - հաղորդագրություններ տվյալ պետության իրավագործության ներքո գտնվող անհատներից կամ նրանց անունից հանդես եկող անձանցից այն մասին, որ իրենք համապատասխան կողմ պետության կողմից Կոնվենցիայի դրույթների խախտման տուժող են (այն դեպքում, եթե ենթադրյալ խախտում կատարած պետությունը հայտարարել է, որ ճանաչում է Կոմիտեի տվյալ իրավասությունը)
 - մասնակից պետության հաղորդագրությունը այն մասին, որ մի կողմի պետությունը պնդում է, որ մյուս կողմի պետությունը չի կատարում Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունները (այն դեպքում, եթե այս երկու մասնակից պետությունները հայտարարել են, որ ճանաչում են Կոմիտեի տվյալ իրավասությունը),
 - հավաստի տեղեկատվություն ստանալու դեպքում, որտեղ մատնանշվում է, որ կողմ պետությունը լրջորեն խախտում է Կոնվենցիայի դրույթները, նա կարող է, համապատասխան կողմ պետության հետ խորհրդակցելուց հետո, խնդրել թույլ տալ իր մեկ կամ մի քանի անդամներին այցելել այդ պետություն և անհապաղ հաշվետվություն ներկայացնել դրա վերաբերյալ:
 - այնպիսի տեղեկատվություն ստանալու դեպքում, որը, Կոմիտեի կարծիքով, պարունակում է բավականաչափ հիմնավորված ապացույցներ, որ բռնությամբ անհետացումը համատարած և պարբերաբար հիմունքներով կիրառվում է կողմ պետության իրավասության տակ գտնվող տարածքում, նա կարող է համապատասխան կողմ պետությունից իրավիճակի վերաբերյալ համապատասխան ամբողջ տեղեկատվությունն ստանալուց հետո հարցն անհապաղ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի միջոցով ներկայացնել ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովին
- Մշակել և ընդունել ընդհանուր մեկնաբանություններ

Կոմիտեի կազմը և գործունեության ձևաչափը

Կոմիտեն կազմված է 10 անկախ փորձագետներից, որոնք գործում են անձնապես: Անդամները ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, պետությունների կողմից առաջադրված թեկնածուների ցանկից: Կոմիտեն յուրաքանչյուր տարի երեք անգամ գումարում է հերթական նիստեր, կարող են գումարվել նաև հատուկ նիստեր: Կոմիտեի պաշտոնական և, հնարավորության դեպքում, աշխատանքային լեզուներն են արաբերեն, չինարենը, անգլերեն, ֆրանսերենը, ռուսերենը և իսպաներենը: Կոմիտեին ուղարկվող փաստաթղթերը պետք է կազմված լինեն պաշտոնական լեզուներից որևէ մեկով: Կոմիտեի և լրացուցիչ մարմինների նիստերը անց են կացվում բաց կերպով, բացառությամբ՝ այն դեպքերի, երբ Կոմիտեն կայացրել է այլ որոշում կամ Կոնվենցիայից բխում է հակառակը:

Հայաստանի վերաբերյալ իրականացված դիտարկումները և ընդունված եզրափակիչ դիտողությունները կամ հանձնարարականները

Բոլոր անձանց բռնի անհետացումներից պաշտպանության միջազգային կոնվենցիան վավերացվել է ՀՀ կողմից 2011 թ. -ին: 2015 թ. -ին Կոմիտեն հրապարակել է առաջին ազգային զեկույցի դիտարկման հիման վրա կազմված ամփոփ եզրակացությունները: Ամփոփ եզրակացություններում Կոմիտեն անդրադարձել է օրենսդրական կարգավորում պահանջող մի շարք խնդիրների վրա: Մասնավորապես, քրեական օրենսգրքով բռնությամբ անհետացումը, որպես առանձին հանցակազմ պատշաճ կերպով սահմանված չլինելու, այնպիսի պետություն, որտեղ փաստացի հիմքեր կան ենթադրելու համար, որ անձը կարող է ենթարկվել բռնությամբ անհետացման նրան վտարելու, վերադարձնելու կամ հանձնելու արգելքի հստակ սահմանված չլինելու հիմնախնդիրներին: Կոմիտեն նաև անդրադարձել է բռնությամբ անհետացման դեպքերի պատշաճ քննությանը, ինչպես նաև ազատությունից զրկված բոլոր անձանց գրացնելու, մարդու իրավունքների պաշտպանության ազգային մարմնի դերի բարձրացմանը:

	1-ին շրջան	2-րդ շրջան
Երբ է ներկայացվել (ամիս/ամսաթիվ)	2013թ. հոկտեմբերի 14	
Երբ պետք է ներկայացվեր (ամիս/ամսաթիվ)	2013թ. փետրվարի 24	2021 թ. փետրվարի 13

Ազգային զեկույց	CED/C/ARM/1	
Հարցադրումների ցանկ	CED/C/ARM/Q/1	
Այլընտրանքային տեղեկատվություն միջազգային հասարակական կազմակերպությունների կողմից		
Այլընտրանքային տեղեկատվություն տեղական հասարակական կազմակերպությունների կողմից		
Այլընտրանքային տեղեկատվություն մարդու իրավունքների պաշտպանության ազգային մարմին կողմից		
Անփոփ եզրակացություն	CED/C/ARM/CO/1	

Վերաբերելի փաստաթղթեր և հղումներ.

☞ Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա

Կայքէջ՝

☞ <http://www.ohchr.org/EN/HRBodies/CED/Pages/CEDIndex.aspx>

10. Խոշտանգումների կանխարգելման հարցերով ենթակումիտե

Խոշտանգումների կանխարգելման հարցերով ենթակումիտեն գործում է Խոշտանգումների, այլ անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ կոնվենցիայի կամրնտիր արձանագրության հիման վրա: Ենթակումիտեի մանդատը ներառում է խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի պաշտպանությունը:

Ենթակումիտեի լիազորությունները

Ենթակումիտեն լիազորված է կատարել մի շարք գործողություններ, որոնք ուղղված են ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի կատարման հանդեպ մշտադիտարկմանը:

Ենթակումիտեի լիազորությունները հետևյալն են .

- այցելել անդամ-պետության իրավագործության և հսկողության ներքո գտնվող ցանկացած վայր, որտեղ անձինք զրկված են կամ կարող են զրկվել իրենց ազատությունից պետական մարմնի կողմից տրված հրամանով կամ նրա հրահրումով, ինչպես նաև՝ նրա համաձայնությամբ կամ թույլտվությամբ և խորհրդատվություններ կազմել մասնակից պետությունների համար՝ խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատագրված անձանց պաշտպանության վերաբերյալ.
- կանխարգելման ազգային մեխանիզմների վերաբերյալ՝
 - տրամադրել խորհրդատվություն և անհրաժեշտության դեպքում աջակցել մասնակից պետություններին դրանց ստեղծման գործում.
 - ապահովել անմիջական և, անհրաժեշտության դեպքում, գաղտնի կապ կանխարգելման ազգային մեխանիզմների հետ և նրանց առաջարկել կարողությունների ուժեղացմանն ուղղված ուսուցում և տեխնիկական աջակցություն.
 - տրամադրել խորհրդատվություն և աջակցել նրանց՝ խոշտանգումներից, այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատագրված անձանց պաշտպանությունն ուժեղացնելու համար անհրաժեշտ կարիքների և միջոցների գնահատման հարցում.
 - կազմել խորհրդատվություններ և դիտողություններ մասնակից պետությունների համար՝ նպատակ ունենալով ուժեղացնել կանխարգելման ազգային մեխանիզմների կարողությունները մանդատը խոշտանգումների, այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման համար.

- ընդհանրապես խոշտանգումների կանխարգելման նպատակով համագործակցել խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից բուռն անձանց պաշտպանությունը ուժեղացնելու ուղղությամբ գործող՝ ՄԱԿ-ի համապատասխան մարմինների և մեխանիզմների, ինչպես նաև՝ միջազգային, տարածաշրջանային և ազգային ինստիտուտների կամ կազմակերպությունների հետ

Ենթակումիտեի կազմն ու գործունեության ձևաչափը

Ենթակումիտեն կազմված է 25 անկախ փորձագետներից, որոնք գործում են անձնապես: Անդամները իրականացնում են այցելություններ վայրեր, որտեղ անձինք կարող են ազատագրվել, ուսումնասիրում պայմանները այդ վայրերում անձանց իրավունքների պաշտպանության վիճակը: Ենթակումիտեի անդամները են գաղտնի քվեարկությամբ, պետությունների կողմից առաջադրված թեկնածուների ցանկից: Ենթակումիտեն իր խորհրդատվությունները և դիտողությունները գաղտնի կերպով է հայտնում պետությանը և անհրաժեշտության դեպքում ազգային կանխարգելման մեխանիզմին:

Հայաստանի վերաբերյալ իրականացված դիտարկումները և ընդունված եզրափակիչ դիտողությունները կամ հանձնարարականները

Խոշտանգումներից, այլ անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ կոնվենցիայի կամ ընտիր արձանագրությունը վավերացվել է ՀՀ կողմից 2006 թ.-ին: Վավերացումից ի վեր Կոմիտեն կատարել է այցելություն Հայաստանի Հանրապետություն՝ 2013թ.: Այցելության ընթացքում Կոմիտեն Հայաստանի ազգային կանխարգելման մեխանիզմի հետ համատեղ այցելություններ է կատարել Նուբարաշեն նյարդահոգեբուժական հաստատությունը, Նուբարաշեն քրեակատարողական հիմանարկ, Երևանի ձերբակալվածների պահման վայր: Այցելության ընթացքում Կոմիտեն հանդիպումներ է ունեցել օրենսդիր, գործադիր մարմինների ներկայացուցիչների, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Այցելությունների արդյունքում Կոմիտեն պատրաստել է գեկույց, որը հրապարակվել է 2014 թ. Կառավարության մեկնաբանությունների հետ համատեղ:

ԲԱԺԻՆ 2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱԿ-Ի ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Հասարակական կազմակերպությունների մասնակցությունը ՄԱԿ-ի գործունեության շրջանակներում

Որոշումների կայացման միջազգային հարթակում հասարակական կազմակերպությունները մասնակցություն են ունեցել դեռևս Ազգերի Լիգայի ժամանակաշրջանից: Մասնավորապես, հասարակական կազմակերպությունները հնարավորություն են ունեցել մասնակցել Ազգերի լիգայի հանդիպումներին և հանձնաժողովներին: Հետագայում ՄԱԿ-ի գործունեությանը հասարակական կազմակերպությունների մասնակցության իրավունքը ամրագրվել է ՄԱԿ-ի կանոնադրության 71-րդ հոդվածով: Իսկ ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի առաջադրանքն է եղել խորհրդակցել հասարակական կազմակերպությունների հետ վերաբերելի հարցերի շուրջ: Այս ամենը Ինչը հանգեցրել է Տնտեսական և սոցիալական խորհրդի խորհրդատվական կարգավիճակի մեխանիզմի ստեղծմանը:

Թեպետ այժմ ընթանում են լայն քննարկումներ հասարակական կազմակերպությունների դերի և արդյունավետության բարձրացմանն ուղղված մեխանիզմների բարելավման վերաբերյալ, այնուամենայնիվ, հասարակական կազմակերպությունների դերը ՄԱԿ-ի մարդու իրավունքների տարբեր մարմինների գործունեության ընթացքում դժվար է գերազնահատել: Այսպես, հասարակական կազմակերպությունները քաղաքացիների և ՄԱԿ-ի մարմինների միջև կապող կարևորագույն օղակն են: Դրանք, մի կողմից՝ բացահայտում են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա հիմնախնդիրները, բարձրաձայնում դրանք ՄԱԿ-ի մարդու իրավունքների մարմինների մոտ և աջակցում են մարդու իրավունքների պաշտպանության չափորոշիչների ձևավորմանը և կայունացմանը, մյուս կողմից՝ մեծապես նպաստում են մարդու իրավունքների չափորոշիչների տեղայնացմանը և կիրարկմանը, ՄԱԿ-ի գործունեության հանդեպ հանրության շրջանում վստահության բարձրացմանը: Ստորև կներկայացվի ՄԱԿ-ի մարմինների գործունեության և նրանց կողմից կիրառվող հիմնական ընթացակարգերի շրջանակներում հասարակական կազմակերպությունների մասնակցության ձևաչափը:

1. Տնտեսական և սոցիալական խորհրդում խորհրդատվական կարգավիճակը, նշանակությունը, կարգավիճակ ձեռք բերելու ընթացակարգը:

ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհուրդն այն մարմինն է, որը համակարգում է տնտեսական, սոցիալական ոլորտների հետ առնչություն ունեցող ՄԱԿ-ի գործակալությունների, հանձնաժողովների գործունեությունը: Այն կազմված է 54 անդամներից, որոնք ընտրվում են ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից: Խորհուրդը նաև ձևավորել է հասարակական կազմակերպությունների մասնակցության ֆորմալ ձևաչափ, որը բխում է թե՛ հասարակական կազմակերպությունների, թե՛ ՄԱԿ-ի մարմիններ շահից:

Մասնավորապես, ձևավորված է ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդում խորհրդատվական կարգավիճակ ստանալու համակարգ, որը թույլ է տալիս ապահովել, որպեսզի հասարակական կազմակերպություններն իրենց ոլորտային և փորձագիտական տեղեկատվությունը տրամադրեն ՄԱԿ-ի մարմիններին, իսկ հասարակական կազմակերպությունները, իրենց հերթին իրենց տեսակետները կարող են ներկայացնել Խորհրդին և ազդեցություն ունենալ Խորհրդի գործունեության վրա: Ձեռք բերելով խորհրդատվական կարգավիճակ, հասարակական կազմակերպությունը կարող է փորձագիտական աջակցություն ցուցաբերել իր գործունեության ոլորտին առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ, աջակցել մշտադիտարկել միջազգային պարտավորությունների իրականացման ընթացքը և այլն: Ստանալով խորհրդատվական կարգավիճակ հասարակական կազմակերպությունները հնարավորություն են ստանում մասնակցել ՄԱԿ-ի շրջանակներում կազմակերպվող միջազգային կոնֆերանսներին, միջոցառումներին, կատարել բանավոր և գրավոր հայտարարություններ այլ միջոցառումների ընթացքում, կազմակերպել հարակից միջոցառումներ, մուտք ունենալ ՄԱԿ-ի մարմինների շենքեր:

Միայն խորհրդատվական կարգավիճակ ունեցող հասարակական կազմակերպությունները կարող են հավաստագիր ստանալ, և որպես դիտորդ մասնակցել ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի նստաշրջաններին: Որպես դիտորդ նրանք կարող են.

- Մասնակցել և դիտարկել խորհրդի բոլոր վարույթները, բացառությամբ Գանգատների ընթացակարգի շրջանակներում վարվող խորհրդակցությունները;

- Գրավոր հաղորդումներ ներկայացնել Մարդու իրավունքների խորհրդին;
- Բանավոր հայտարարություններով դիմել Մարդու իրավունքների խորհրդին;
- Մասնակցել Համընդհանուր պարբերական դիտարկմանը;
- Մասնակցություն ունենալ բանավեճերին, ինտերակտիվ երկխոսություններին, պանելային քննարկումներին և ոչ ֆորմալ հանդիպումներին;
- Կազմակերպել հարակից միջոցառումներ:

Գործում է խորհրդատվական կարգավիճակի 3 տեսակ .

- Ընդհանուր կարգավիճակ՝ ստանում են այն կազմակերպությունները, որոնք ներկայացնում են հասարակության լայն շրջանակը և իրենց գործունեության մեջ ներառում են Տնտեսական և սոցիալական խորհրդի օրակարգի առավել քան 35 հիմնախնդիր: Սովորաբար այս կարգավիճակը ստանում են համեմատաբար մեծ, կայացած, լայն աշխարհագրական ծածկույթ ունեցող միջազգային հասարակական կազմակերպություններ;
- Հատուկ կարգավիճակ՝ ստանում են այն կազմակերպությունները, որոնք գործունեություն են ծավալում առանձին ոլորտներում և ծածկում են Տնտեսական և սոցիալական խորհրդի օրակարգում գտնվող որոշ հիմնախնդիրներ:
- Գրանցվածի կարգավիճակ (Roster)՝ այս կարգավիճակը ստանում են այն հասարակական կազմակերպությունները, որոնց գործունեության ոլորտը նեղ է, կամ առավելապես կրում է տեխնիկական բնույթ:

Խորհրդատվական կարգավիճակ ստանալու համար հասարակական կազմակերպությունը պետք է համապատասխանի հետևյալ չափորոշիչներին .

- Հասարակական կազմակերպության գործունեությունը պետք է համապատասխանի Տնտեսական և սոցիալական խորհրդի գործունեությանը;
- Այն պետք է ունենա թափանցիկ և ժողովրդավարական կերպով որոշում կայացնելու ընթացակարգեր և ժողովրդավարական կերպով ընդունված Կանոնադրություն;
- Այն պետք է ունենա կայացած գլխամաս և գործադիր տնօրեն;

- Այն պետք է գործի առավել քան 2 տարի;
- Այն պետք է լիազորված լինի գործել իր անդամների անունից;
- Այն պետք է ունենա ներկայացուցչական կառուցվածք:

Խորհրդատվական կարգավիճակ ստանալու դիմելու ընթացակարգը

Խորհրդատվական կարգավիճակ ստանալու նպատակով կազմակերպությունը պետք է առցանց կերպով գրանցի իր կազմակերպության անհատական էջը:

Անհատական էջը ստեղծվում է հետևյալ հղումով՝ սեղմելով «Create new profile» կոճակին:

Հաջորդիվ կազմակերպության կողմից լրացվում է համապատասխան առցանց հայտաձևը՝ նաև ներբեռնելով անհրաժեշտ փաստաթղթերը: Համապատասխան հայտաձևը լրացնելու նպատակով պետք է անհատական էջ մուտք գործելուց հետո սեղմել «Consultative status», լրացնել բոլոր անհրաժեշտ դաշտերը, ներբեռնել բոլոր պահանջված փաստաթղթերը և սեղմել «Submit» կոճակը:

Դիմում հայտ ներկայացնելու հետո հայտը ուսումնասիրվում է Տնտեսական և սոցիալական հարաբերությունների վարչության հասարակական կազմակերպությունների մասնաճյուղի կողմից: Ինչից հետո այն ուսումնասիրվում է Տնտեսական և սոցիալական խորհրդի Հասարակական կազմակերպությունների կոմիտեի կողմից հունվար կամ մայիս ամիսներին: Ուսումնասիրության ընթացքում Կոմիտեն կարող է հարցադրումներ անել հասարակական կազմակերպությանը, պահանջելով հրատապ պատասխան այդ հարցադրումներին: Այդ հարցադրումների միջոցով հասարակական կազմակերպության հայտը Տնտեսական և սոցիալական խորհրդում քննարկման ներկայացնելը կարող է ձգձգվել: Տնտեսական և սոցիալական խորհրդում հայտերի քննարկումները տեղի են ունենում յուրաքանչյուր տարի հուլիս ամսին: Ուստի, որպեսզի հասարակական կազմակերպության հայտը քննարկվի տվյալ տարվա ընթացքում այն պետք է ներկայացվի մինչև հունիսի 1-ը: Հայտը ներկայացվում է անզլերեն կամ ֆրանսերեն լեզուներով:

Խորհրդատվական ընդհանուր և հատուկ կարգավիճակ ստացած կազմակերպությունները յուրաքանչյուր 4 տարին մեկ անգամ Տնտեսական և սոցիալական խորհրդի հասարակական կազմակերպությունների կոմիտեին են

ներկայացնում իրենց գործունեության վերաբերյալ հակիրճ զեկույց, մասնավորապես այն միջոցառումների մասին, որի միջոցով նրանք նպաստել են ՄԱԿ-ի նպատակներին:

2. Համընդհանուր պարբերական դիտարկման փուլերը և քաղաքացիական հասարակության մասնակցության ձևաչափը

Համընդհանուր պարբերական դիտարկումը ձևավորվել է որպես մի մեխանիզմ, որի շրջանակներում պետություններն են քննարկում և գնահատական տալիս մյուս պետությունների կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առաջընթացին: Այնուամենայնիվ, այս գործընթացի շրջանակներում ապահովված է թե՛ ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության մարմինների՝ ի դեմս Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի, թե՛ քաղաքացիական հասարակության մասնակցության և Դիտարկման արդյունքների վրա ազդեցության որոշ մեխանիզմներ:

Ստորև կուսումնասիրվի հասարակական կազմակերպությունների մասնակցության ձևաչափը Համընդհանուր պարբերական դիտարկման յուրաքանչյուր փուլի շրջանակներում:

Դիտարկման նախապատրաստման փուլ .

- Մասնակցել ազգային զեկույցի նախապատրաստական աշխատանքներին:

Մարդու իրավունքների խորհրդի թիվ A/HRC/RES/5/1 բանաձևի համաձայն՝ Չեկուցող անդամ պետությունները խրախուսվում են ազգային զեկույցների նախապատրաստման ընթացքում իրականացնել լայնածավալ խորհրդակցություններ շահակիցների շրջանում: Հասարակական կազմակերպությունները կարող են խրախուսել Կառավարությանը իրականացնել խորհրդակցություններ և հանրային քննարկման ներկայացնել ազգային զեկույցը: Այս նպատակով նրանք դիտարկումից 1-1,5 տարի առաջ կարող են հարցումներ ուղարկել պատասխանատու գերատեսչություն պարզելու թե, արդյոք արդեն իսկ մեկնարկել են ազգային զեկույցի պատրաստման աշխատանքները, որ փուլում է այն գտնվում և երբ այն կներկայացվի հանրային քննարկման:

Հասարակական կազմակերպությունները կարող են գրավոր և բանավոր կերպով իրենց առաջարկությունները և մեկնաբանությունները ներկայացնել Ազգային զեկույցի բովանդակության վերաբերյալ:

- Մարդու իրավունքների խորհրդին այլընտրանքային տեղեկատվություն ներկայացնել երկրում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ:

Մարդու իրավունքների խորհրդում Համընդհանուր պարբերական դիտարկումը իրականացվում է հետևյալ 3 աղբյուրներից ստացված տեղեկատվության հիման վրա՝

- Դիտարկվող պետության կառավարության կողմից պատրաստված ազգային զեկույց;
- ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի կողմից պատրաստված ամփոփում՝ հիմնված տվյալ պետությունում մարդու իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերի և պայմանագրային մարմիններից ստացված տեղեկատվության վրա;
- ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի կողմից պատրաստված 10 էջանոց ամփոփում՝ հիմնված այլ շահագրգիռ կողմերից ստացված տեղեկատվության վրա:

Մարդու իրավունքների Խորհրդի թիվ 5/1 բանաձևի համաձայն այլ շահագրգիռ կողմերն են հասարակական կազմակերպությունները, մարդու իրավունքների պաշտպանության հաստատությունները, ակադեմիական և հետազոտական հաստատությունները, տարածաշրջանային կազմակերպությունները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Այս շահագրգիռ կողմերը կարող են տեղեկատվություն ներկայացնել թե՛ անձամբ, թե՛ համատեղ՝ կազմելով և ներկայացնելով համատեղ զեկույց:

Շահագրգիռ անձանց կողմից պատրաստվող զեկույցներին ներկայացվող պահանջները սահմանված են Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի կողմից պատրաստված տեխնիկական ուղեցույցով:

Այլընտրանքային զեկույցի բովանդակությունը

Այլընտրանքային զեկույց պատրաստելու համար առաջին հերթին անհրաժեշտ է որոշել, թե պետության կողմից ստանձնած որ պարտավորությունների վերաբերյալ է նախատեսվում ներկայացնել տեղեկատվությունը: Անհրաժեշտ է ելնել այն սկզբունքից, որ Համընդհանուր պարբերական դիտարկումը իրականացվում է միջազգային հետևյալ փաստաթղթերի հիման վրա.

- ՄԱԿ-ի կանոնադրություն;
- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր;
- Մարդու իրավունքների այն փաստաթղթեր, որի անդամ է տվյալ պետությունը;
- Այն պարտավորությունները, որոնք պետությունը կամավոր ստանձնել է, ներառյալ այն պարտավորությունները, որոնք իր վրա է վերցրել Մարդու իրավունքների խորհրդի անդամի թեկնածու առաջադրելու ժամանակ;
- Միջազգային մարդասիրական վերաբերելի իրավունք:

Կարևոր է, որպեսզի այլընտրանքային զեկույցը հիմնված լինի հավաստի, իրական, հստակ, չափելի և փաստարկված տեղեկության վրա: Ինչպես նաև ցանկալի է, որպեսզի տեղեկատվություն ներկայացնող շահագրգիռ կողմը լինի այդ տեղեկատվության տնօրինողը և առաջնային աղբյուրը, հակառակ դեպքում անհրաժեշտ է հղում կատարել տեղեկատվության աղբյուրներին: Ուստի ցանկալի է, որպեսզի կազմակերպությունը կամ այլ շահագրգիռ կողմն իր գործունեության ընթացքում առաջնորդվի մարդու իրավունքների առանձին ոլորտներում կամ մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կայացման վերաբերյալ փաստարկված տեղեկատվության հավաքագրման և հիմնավոր հետազոտությունների իրականացման սկզբունքով:

Հայաստանն արդեն իսկ անցել են պարբերական դիտարկման 2 շրջան՝ (1-ինը՝ 2008-2011թթ. և 2012-2016թթ.): Այս երկու դիտարկման շրջանների ընթացքում Հայաստանին է ներկայացվել իրականացման ենթակա հանձնարարականների լայն ցանկ: Ցանկալի է, որպեսզի այլընտրանքային զեկույցի մեջ ներառված լինի տեղեկատվություն վերաբերելի ոլորտում հանձնարարականների կատարման ընթացքի և վիճակի մասին:

Այսպիսով, մինչ զեկույցի պատրաստման աշխատանքները նախաձեռնելը անհրաժեշտ է

- Որոշում կայացնել, թե Պետության որ պարտավորությունների կատարման վերաբերյալ է ներկայացվելու զեկույցը:
- Ուսումնասիրել, թե ինչ հանձնարարականներ է ներկայացվել տվյալ պարտավորությունների վերաբերյալ Կառավարությանը նախորդ դիտարկումների ընթացքում:
- Ուսումնասիրել, թե ինչպես է արձագանքել Կառավարությունը տվյալ հանձնարարականին (ընդունել է, թե ոչ):
- Հավաքագրել տվյալ պարտավորությունների կատարման վերաբերյալ փաստեր, տեղեկատվություն, փորձագիտական կարծիքներ, որոնք նաև կներկայացնեն, թե ինչ առաջընթաց է իրականացվել տվյալ հանձնարարականի իրականացման շուրջ:

Այլընտրանքային զեկույցի կառուցվածք

Այլընտրանքային զեկույցը կազմելիս անհրաժեշտ է առաջնորդվել ներքոշարադրյալ կանոններով:

Զեկույցը չի կարող ներկայացվել անանուն կերպով, ուստի զեկույցի առաջին էջը պետք է պարզ տեղեկատվություն պարունակի այլընտրանքային զեկույցը ներկայացնող կազմակերպության կամ կազմակերպությունների վերաբերյալ, ներառյալ անվանումներ, տարբերանշաններ, կայքէջի հասցե, էլեկտրոնային հասցե, փոստային հասցե և այլն: Մի խումբ կազմակերպությունների կողմից ներկայացված Զեկույցը պետք է ներառի Զեկույցի բոլոր մասնակիցների ցանկը, ինչպես նաև, կազմակերպությունների հիմնադրման ամսաթիվը, մասնավորապես այն կազմակերպությունների դեպքում, որոնք առաջին անգամ են հաղորդակցվում ՄԱԿ-ի մարմինների հետ:

Այս տեղեկատվությանը պետք է հաջորդի հակիրճ տեղեկատվություն զեկույց ներկայացնող կազմակերպության գործունեության վերաբերյալ: Ցանկալի է, որպեսզի զեկույցը ունենա նաև ներառական մաս և ընդհանուր տեղեկատվություն ներկայացնի մարդու իրավունքների սկզբունքների ապահովման վերաբերյալ, Կառավարության կողմից ազգային զեկույցի պատրաստման ընթացքում շահագրգիռ կողմերի ներգրավման վերաբերյալ:

Այս ամենին պետք է հաջորդի առանձին հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը: Եթե այդ հիմնախնդիրները բարձրաձայնվել են նախորդ դիտարկումների ընթացքում և դրանց վերաբերյալ առկա է

հանձնարարական, ապա անհրաժեշտ է վկայակոչել տվյալ հանձնարարականը, նշելով այն Ձեկույցը, որում արձանագրված է հանձնարարականը, դիտարկման շրջանը, պարբերության հերթական համարը, հանձնարարականի հերթական համարը և հանձնարարական ներկայացնող պետությունը (օրինակ՝ Հանձնարարական թիվ 93.4 (Ֆինլանդիա), պարբ. 93, Հայաստանի վերաբերյալ ամփոփիչ եզրակացություններ (2010 թ.), դիտարկման առաջին շրջան): Եթե տվյալ հանձնարարականը կրկնվել է մեկ անգամից ավել, դիտարկման մյուս շրջանի ընթացքում ևս, ապա անհրաժեշտ է նշել նաև մյուս շրջանների վերաբերյալ տեղեկատվությունը, նաև հստակ մատնանշելով, որ տվյալ հանձնարարականը կրկնվել է դիտարկման մեկ կամ երկու շրջանների ընթացքում:

Տեղեկատվությունը և վերլուծությունը պետք է ներկայացվի հետևյալ կառուցվածքով

Ձեկույցը պետք է ներառի տեղեկատվություն հանձնարարականի կատարման առաջընթացի վերաբերյալ, ներառյալ մատնանշելով թե, ինչ ազդեցություն է ունեցել այդ առաջընթացը մարդու իրավունքների պաշտպանության վրա, տեղեկատվություն արձանագրված հետընթացի վերաբերյալ:

Խնդրի վերաբերյալ յուրաքանչյուր տեղեկատվության մասին անհրաժեշտ է սահմանել այն գործողությունները, որոնք դեռևս անհրաժեշտ է ձեռնարկել հանձնարարականը ամբողջությամբ կատարելու համար: Գործողությունները պետք է ձևակերպված լինեն դիտարկվող պետությանը ներկայացվող հանձնարարականի ձևաչափով: Ի լրումն հանձնարարականի կատարման վերաբերյալ մեկնաբանության, կարող է ներկայացվել նաև հանձնարարականի կատարման վերաբերյալ հակիրճ գնահատական, օրինակ՝ նշելով կատարման տոկոսային չափը, կամ «ամբողջությամբ կատարված», «կիսով չափ կատարված», «կատարման ընթացքում» և այլն:

Ձեկույցը պետք է ներառի միայն վստահելի և հուսալի տեղեկատվություն, տվյալ երկրում մարդու իրավունքների վերաբերյալ, ընդգծելով երկրում մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական խնդիրները, լավագույն փորձը և առաջարկությունները՝ նախորդ դիտարկումից սկսած ժամանակահատվածի համար:

Տեղեկատվությունը չի կարող գրված լինել անհարգալից լեզվով:

Շահագրգիռ անձանց համար հասանելի են դարձել առաջարկությունների թեմատիկ աղյուսակը, որը կարող է լրացվել նաև հասարակական կազմակերպությունների կողմից և ներկայացվել որպես այլընտրանքային զեկույցի հավելված: Առաջարկությունների թեմատիկ աղյուսակը կազմվում և տեղադրվում է տվյալ պետության դիտարկման էլեկտրոնային էջում մինչ դիտարկումը: Հաշվի առնելով, որ ՀՀ վերաբերյալ աղյուսակը դեռևս տեղադրված չէ, այս հղումով կարող եք տեսնել Լեհաստանի վերաբերյալ կազմված թեմատիկ աղյուսակը: Նշված աղյուսակի լրացումը և ներկայացումն ինքնին չի կարող փոխարինել զեկույցը, այն կարող է ներկայացվել միայն որպես լրացում հիմնական զեկույցին:

Ձեկույցին ներկայացվող տեխնիկական պահանջները

Ձեկույցը պետք է ներկայացվի գրավոր, էլեկտրոնային կերպով, Word փաստաթղթի ձևաչափով: Ձեկույցի ծավալը չի կարող գերազանցել 2815 բառը, իսկ կազմակերպությունների խմբի կամ կոալիցիայի կողմից ներկայացվող զեկույցի ծավալը չի կարող գերազանցել 5630 բառը: Կազմը, հավելվածները և ծանոթագրությունները չեն հաշվարկվում բառերի նշված քանակի մեջ: Միննույն ժամանակ, ծանոթագրությունները չպետք է ներառեն բովանդակային տեղեկատվություն, այլ միայն հղում: Հակառակ դեպքում տվյալ բովանդակային տեղեկատվությունը չի դիտարկվի և օգտագործվի ամփոփման մեջ ներառելու համար:

Փաստաթղթի բոլոր էջերը, պարբերությունները և հղումները պետք է համարակալված լինեն:


Ձեկույցը կարող է ներկայացվել ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներից յուրաքանչյուրով, սակայն նախընտրելի է, որպեսզի այն ներկայացված լինի անգլերեն, ֆրանսերեն կամ իսպաներեն լեզուներով:

Ինչպե՞ս և ո՞ւմ ներկայացնել Ձեկույցը

Ձեկույցը ներկայացվում է առցանց տարբերակով: Այն ներկայացնելու նպատակով կազմակերպությունը կամ կոալիցիան պետք է իր անձնական էջը



գրանցի “On-line UPR Submissions Registration System” համակարգում: Համակարգում գրանցում իրականացվում է հետևյալ կայքէջի միջոցով՝ <https://uprdoc.ohchr.org>:



Համակարգում գրանցված կազմակերպությունները կարող են ներբեռնել այլընտրանքային զեկույցը:

Յուրաքանչյուր կազմակերպություն տվյալ շրջանի ընթացքում կարող է ներկայացնել մեկ զեկույց և մասնակցություն ունենալ զեկույց

ներկայացնող մեկ և ավելի կոալիցիաներում: Եթե զեկույց է ներկայացվում կոալիցիայի անունից, խորհուրդ է տրվում վերը նշված համակարգում գրանցել կոալիցիան: Զեկույցները պետք է ներկայացվեն մինչ սահմանված վերջնաժամկետների լրանալը:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ չի թույլատրվում ներկայացնել անանուն զեկույցներ: Ուստի խորհուրդ է տրվում զգուշորեն մոտենալ զեկույցում անհատների նույնականացման տվյալներ հիշատակելիս և հաշվի առնել նրանց անվտանգությունը և ապահովությունը:

Այնուամենայնիվ, եթե կազմակերպությունը գտնում է, որ մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի հետ համագործակցության փորձի կամ համագործակցության արդյունքում նրան կարող է վտանգ սպառնալ, նա կարող է հայտնել ահաբեկման կամ ռեպրեսիայի դեպքի վերաբերյալ՝ գրելով հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ reprisals@ohchr.org:

Վերը նշված համակարգից օգտվելու վերաբերյալ հարցերի դեպքում կարելի է գրել UPR Submissions Helpdesk ծառայությանը: uprsubmissions@ohchr.org

ՀՊԴ այլընտրանքային զեկույցի վերաբերյալ հարցերի դեպքում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են գրել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ civilsociety@ohchr.org, կամ զանգահարել +41 22 917 96 56 հեռախոսահամարով:

Ջատագովումը ՄԱԿ-ի անդամ պետությունների առջև

Հասարակական կազմակերպությունները կարող են ջատագովել պետություններին առջև, որպեսզի Դիտարկման ընթացքում Կառավարությանը ներկայացվեն որոշակի հարցադրումներ, ինչպես նաև հանձնարարականներ:

Ընդ որում այդ հարցադրումները կարող և ներկայացվել ինչպես նախապես գրավոր կերպով ներկայացվող նախնական հարցերի միջոցով (տե՛ս օրինակ՝ http://lib.ohchr.org/HRBodies/UPR/Documents/Session21/AM/Advanced_questions_Armenia.docx), այնպես էլ նիստի ընթացքում բանավոր կերպով:

Ջատագովությունը կարող է իրականացվել ինչպես Հայաստանում այնպես էլ Ժնևում: Հայաստանում կազմակերպությունները կարող են իրենց կողմից կազմված հարցադրումների ցանկը և հանձնարարականներն ուղարկել Հայաստանում գործող դեսպանատներ և քննարկումների միջոցով իրազեկել դիվանագիտական ներկայացուցիչներին քաղաքացիական հասարակության մտահոգությունների վերաբերյալ: Այս ամենը ցանկալի է անել 3-4 ամիս առաջ մինչ դիտարկումը:

Հայաստանում գործող դիվանագիտական ներկայացուցչությունների ցանկը կարող եք գտնել հետևյալ հղումով:

Ժնևում հասարակական կազմակերպությունները կարող են իրենց մտահոգությունները և հանձնարականները ուղարկել Ժնևում գործող պատվիրակություններին, ինչպես նաև, կրկին քննարկումներ կազմակերպել ՄԱԿ-ում անդամ պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների հետ: ՄԱԿ-ում գործող դիվանագիտական ներկայացուցչությունների ցանկը կարող եք գտնել հետևյալ հղումով:

Որոշ միջպետական հասարակական կազմակերպություններ տվյալ երկրի վերաբերյալ Դիտարկումից մեկ ամիս առաջ կազմակերպում են հասարակական կազմակերպությունների և մշտական ներկայացուցչությունների մասնակցությամբ նախնական լսումներ: Նշված նախնական լսումների վերաբերյալ լրացուցիչ կարող եք տեղեկանալ հետևյալ հղումով:

Մշտական և դիվանագիտական ներկայացուցչությունների հետ քննարկումների ընթացքում ցանկալի է հնչեցնել սահմանափակ քանակով հարցադրումներ և հանձնարարականներ, իսկ դիվանագիտական և մշտական

ներկայացուցչություններին տրամադրվող գրավոր փաստաթղթերը պետք է լինեն հակիրճ, ոչ ավելի քան 2 էջ, և ներառե հստակորեն ձևակերպված առաջարկություններ:

Դիվանագիտական և մշտական ներկայացուցչությունների առջև ջատագովություն իրականացնելիս ցանկալի է ուսումնասիրել, թե որ բնույթի խնդիրներով է առավել հետաքրքրված տվյալ պետությունը և ինչ խնդիրների վերաբերյալ հարցադրումներ և հանձնարարականներ է հնչեցրել՝ թիրախավորված մոտեցում ցուցաբերելու նպատակով: Ցանկալի է նաև ուսումնասիրել, թե Հայաստանում որ երկրների կողմից և որ ոլորտներում են իրականացվում ներդրումներ, տրամադրվում վարկեր և իրենց ուշադրությունը հրավիրել տվյալ ոլորտներում առկա խնդիրներին:

- *Դիտարկման ընթացքում*

Տնտեսական և սոցիալական հանձնաժողովի խորհրդակցական կարգավիճակ ունեցող հասարակական կազմակերպությունները կարող են ներկա գտնվել Մարդու իրավունքների հանձնաժողովում Ջեկույցի քննարկմանը, կազմակերպել դիտարկումից առաջ կամ դիտարկումից հետո հարակից միջոցառում, քննարկում: Մարդու իրավունքների հանձնաժողովի նիստին մասնակցելու նպատակով Խորհրդատվական կարգավիճակ ունեցող հասարակական կազմակերպությունը պետք է ստանա հավատարմագիր: Մարդու իրավունքների հանձնաժողովի նիստին մասնակցության, հարակից միջոցառումների կազմակերպման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ստանալ հետևյալ հղումով:

- *Դիտարկման և Մարդու իրավունքների խորհրդում ամփոփ եզրակացությունների միջև ընկած ժամանակահատվածում*

Այս ժամանակահատվածում հասարակական կազմակերպությունները կարող են միջոցներ ձեռնարկել պարզելու, թե հանձնարարականներից որոնք ընդունելի կհամարվեն Կառավարության կողմից, և անհրաժեշտության դեպքում՝ ջատագովել որոշ հանձնարարականների ընդունման համար:

- *Մարդու իրավունքների խորհրդում զեկույցի ընդունման ընթացքում*

Մարդու իրավունքների խորհրդում զեկույցի ընդունման ընթացքում հասարակական կազմակերպություններին տրամադրվում է 20 րոպե ժամանակ բանավոր հայտարարությամբ հանդես գալու համար: Բանավոր հայտարարությամբ հանդես

գալու համար կարող են հանդես գալ առավելագույնը 10 հասարակական կազմակերպություն, այսինքն՝ յուրաքանչյուր հասարակական կազմակերպությանը կտրամադրվի ոչ պակաս քան 2 րոպե ժամանակ: Այս 10 հասարակական կազմակերպությունները ընտրվում են ըստ գրանցման առաջնահերթության: Բանավոր հայտարարությամբ հանդես գալու համար հասարակական կազմակերպությունները սկզբից պետք է անձնական էջ ստեղծեն հետևյալ [հղումով](#): Ինչից հետո նիստին հայտարարությամբ հանդես գալու համար պետք է գրանցվեն հետևյալ [հղումով](#):

Բանավոր հայտարարությամբ հանդես գալու համար գրանցվելու ընթացակարգի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարող եք ստանալ հետևյալ [հղումով](#):

Հասարակական կազմակերպությունները կարող են հանդես գալ նաև համատեղ բանավոր հայտարարությամբ: Այդ նպատակով նրանք պետք է լրացնեն համատեղ բանավոր հայտարարությամբ հանդես գալու վերաբերյալ հետևյալ [ձևաթուղթը](#):

Այն հասարակական կազմակերպությունները, որոնք այլընտրանքային զեկույց են ներկայացրել նշված դիտարկմանն ընդառաջ կամ մասնակցել են ազգային մակարդակում զեկույցի պատրաստման աշխատանքներին կարող են նաև իրենց հայտարարությունը հնչեցնել տեսանյութի տեսքով՝ այսինքն պարտադրված չեն մեկնել Ժնև: Տեսանյութի միջոցով հայտարարություն ներկայացնել չեն կարող այն հասարակական կազմակերպությունները, որոնք ունեն ներկայացուցչություն Ժնևում, կամ Մարդու իրավունքների համապատասխան նիստին մասնակցության համար հավատարմագրված անդամ :

Տեսանյութի միջոցով հայտարարություն ներկայացնելու համար լրացուցիչ տեղեկատվություն կարող եք ստանալ հետևյալ [հղումով](#):

Հասարակական կազմակերպությունները կարող են Մարդու իրավունքների խորհրդին ներկայացնել իրենց գրավոր հայտարարությունը:

Գրավոր հայտարարությունների ներկայացման ընթացակարգի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարող եք ստանալ հետևյալ [հղումով](#):

- *Աշխատանքային խմբի կողմից զեկույցը հրապարակելուց հետո*

Երբ արդեն պարզ է, թե որոնք են այն հանձնարարականները, որոնք պետք է կատարվեն Կառավարության կողմից մինչ մյուս դիտարկումը՝ հասարակական կազմակերպությունները կարող են իրենց ջանքերը ներդնել նշված հանձնարարականների իրականացման աջակցության շուրջ: Այն կարող է իրականացվել նշված հանձնարարականների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման, մշտադիտարկումների և հանձնարարականների իրականացման վերաբերյալ պարբերական գնահատումների, հանձնարարականների իրականացման նպատակով պետությանը հորդորելու և կոնկրետ գործողություններ իրականացնելու տեսքով:

Հասարակական կազմակերպությունները կարող են նաև կազմել հանձնարարականների կատարման վերաբերյալ միջանկյալ զեկույց և հրապարակել այն:

3. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների կողմից պարբերական դիտարկումների գործընթացին:

- *Ազգային զեկույցի պատրաստման փուլում*

ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների կողմից պետության ազգային զեկույցների քննարկումը իրականացվում է Կառավարության կողմից ներկայացված Ազգային զեկույցի, այլ շահագրգիռ կազմակերպությունների կողմից ներկայացված այլընտրանքային զեկույցների հիման վրա: Ազգային զեկույցը պատրաստվում է անդամ-պետության կառավարության կողմից: Որպես կանոն, այդ զեկույցի պատրաստման աշխատանքներին պետք է ներգրավվեն պետության բոլոր շահագրգիռ կողմերը, իրականացվեն հնարավորինս լայնածավալ քննարկումներ: Ազգային զեկույցի նախագիծը հրապարակվում և /կամ ուղարկվում է շահագրգիռ անձանց՝ կարծիքների համար: Կարող են կազմակերպվել հանրային քննարկումներ: Հասարակական կազմակերպությունները դիտարկմանն ընդառաջ կարող են դիմել պատասխանատու գերատեսչությանը, խնդրելով տրամադրել տեղեկատվություն Ազգային զեկույցի պատրաստման ընթացքի վերաբերյալ, խնդրելով նաև տրամադրել զեկույցի նախագիծը:

Ազգային զեկույցները ներկայացվում են պայմանագրային մարմինների կողմից մշակված ուղեցույցներին համապատասխան: Ազգային զեկույցները պետք է ներկայացվեն ըստ սահմանված պարբերականության: Որոշ դեպքերում կոմիտեն կարող է պահանջել արտահերթ տեղեկատվություն որևէ խնդրի վերաբերյալ: Եվ հակառակը՝ հաշվի առնելով, պետությունների ուշացումները պետության կողմից ներկայացվող երկու կամ ավել պարբերական զեկույցները դիտարկվում են համատեղ, կամ կարող են ներկայացվել մեկ զեկույց մեկից ավել շրջանների համար:

Այլընտրանքային զեկույցի ներկայացում

Ազգային զեկույցի հետ զուգահեռ, կամ նույնիսկ այն դեպքում, երբ անդամ-պետության կողմից չի ներկայացվել ազգային զեկույց, համապատասխան Կոնվենցիայով սահմանված պարատականությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն կարող է ներկայացվել պետության շահագրգիռ կազմակերպությունների՝ հասարակական կազմակերպությունների, մարդու իրավունքների պաշտպանության մարմինների կողմից:

Այդ տեղեկատվությունը կարող է ներկայացվել կոնֆիդենցիալ կերպով (ստվերային զեկույց) կամ բացահայտ (այլընտրանքային զեկույց):

Զեկույցները պետք է ներկայացվեն հնարավորինս վաղ, որպեսզի Կոմիտեն և կոմիտեի աշխատանքային խմբերը հնարավորինս շատ ժամանակ ունենան ծանոթանալու զեկույցին: Միննույն ժամանակ, պայմանագրային մարմիններն իրենց ներքին կանոնակարգերով սահմանում են այլընտրանքային/ստվերային զեկույցների ներկայացման ժամկետներ: Զեկույցի քննարկմանն ընդառաջ հստակ ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է Պայմանագրային մարմնի կայքէջում:

Ընդհանրական ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը տեսեք ստորև աղյուսակում:

	Այլընտրանքային /ստվերային զեկույցի ներկայացման ժամկետ	Խնդիրների ցանկի վերաբերյալ առաջարկների ներկայացման ժամկետ	Այլընտրանքային զեկույցի ծավալը	Կոմիտեի հետ բանավոր քննարկումներ
<p>Մարդու իրավունքների կոմիտե</p> <p>ccpr@ohchr.org</p> <p>Յուրաքանչյուր նստաշրջանի համար կոմիտեն սահմանում է այլընտրանքային/ստվերային զեկույցի ներկայացման ժամկետները:</p> <p>Նստաշրջանների մասին տեղեկություն կարող եք ստանալ հետևյալ հղումով:</p>	<p>Ցանկացած ժամանակ, սակայն ցանկալի է մինչ խնդիրների ցանկի ընդունումը, կամ քննարկման համապատասխան նիստից 2 շաբաթ առաջ:</p>	<p>Աշխատանքային խմբի քննարկումից 6 շաբաթ առաջ</p>	<p>Սահմանված չէ առավելագույն ծավալ</p>	<p>Նստաշրջանի առաջին օրը նվիրված է ՀԿ-ների բանավոր ներկայացումների:</p> <p>Հանդիպումներ նախաճաշի կամ ճաշի ժամին:</p>
<p>Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների կոմիտե</p> <p>cescr@ohchr.org</p> <p>Յուրաքանչյուր նստաշրջանի համար կոմիտեն սահմանում է այլընտրանքային/ստվերային զեկույցի ներկայացման ժամկետները:</p> <p>Նստաշրջանների մասին տեղեկություն կարող եք ստանալ հետևյալ հղումով:</p>	<p>Ցանկալի է Կոմիտեի քննարկումից մեկ շաբաթ առաջ</p>	<p>Ցանկալի է աշխատանքային խմբի քննարկումից մեկ շաբաթ առաջ</p>	<p>Սահմանված չէ առավելագույն ծավալ</p>	<p>Նստաշրջանից առաջ աշխատանքային խմբի քննարկումներ առաջին օրը և</p> <p>Նստաշրջանի առաջին օրը</p>

<p>Ռասայական խտրականության դեմ պայքարի կոմիտե</p> <p>cerd@ohchr.org</p>	<p>Ցանկալի է Կոմիտեի քննարկումից շաբաթ առաջ</p>		<p>Սահմանված չէ առավելագույն ծավալ</p>	<p>Քննարկումներ ճաշի ժամին</p>
<p>Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե</p> <p>cedaw@ohchr.org</p> <p>Մարդու իրավունքների կոմիտեն իր կայքէջում հրապարակում է <u>Հասարակական կազմակերպությունների հետ աշխատելու կարգ յուրաքանչյուր նիստին ընդառաջ</u>:</p> <p>Նստաշրջանների մասին տեղեկություն կարող եք ստանալ հետևյալ <u>հղումով</u>:</p>	<p>Ցանկացած ժամանակ, սակայն ցանկալի է Կոմիտեի քննարկումից ամիս առաջ</p>	<p>Ցանկալի է ներկայացնել 2 շաբաթ առաջ նիստին նախորդող աշխատանքային խմբի հանդիպումից առաջ</p>	<p>10 էջ, 20 էջ ՀԿ-ների կոալիցիայի համար:</p>	<p>Նստաշրջանից առաջ աշխատանքային և խմբի քննարկումներ առաջին օրը:</p> <p>Նստաշրջանի յուրաքանչյուր շաբաթվա ռաջին օրը:</p> <p>Կարող են կազմակերպվել այլ ոչ ֆորմալ քննարկումներ ևս:</p>
<p>Խոշտանգումների դեմ պայքարի կոմիտե</p> <p>cat@ohchr.org</p> <p>Կոմիտեի գալիք նիստերի վերաբերյալ ժամկետներին կարող եք ծանոթանալ հետևյալ <u>հղումով</u>:</p>	<p>Նիստից 3 շաբաթ առաջ</p>	<p>3 ամիս առաջ</p>	<p>Սահմանված չէ</p>	<p>Պետության զեկույցի քննարկման նախորդ օրը</p>
<p>Երեխաների իրավունքների կոմիտե</p> <p>crc@ohchr.org</p> <p>Նստաշրջանների մասին տեղեկություն կարող եք ստանալ հետևյալ</p>	<p>Աշխատանքային խմբի հանդիպումից 2 ամիս առաջ</p>			<p>Նստաշրջանից առաջ աշխատանքային և խմբի քննարկումներ առաջին օրը:</p> <p>Նստաշրջանի</p>

<p>հղումով:</p>				<p>ընթացքում ՀԿ-ները կարող են խնդրել մասնավոր հանդիպում Կոմիտեի հետ</p> <p>2 շաբաթ առաջ</p>
<p>Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտե</p> <p>crpd@ohchr.org</p> <p>Նստաշրջանների մասին տեղեկություն կարող եք ստանալ հետևյալ հղումով:</p>	<p>Նստաշրջանի առաջին նիստից 3 շաբաթ առաջ:</p>		<p>Առավելագույնը 10,700 բառ այլընտրանքային զեկույցների համար</p> <p>5,350 այլ տեղեկատվության համար</p>	<p>Նստաշրջանից առաջ աշխատանքային խմբի քննարկումների ընթացքում առաջին օրը:</p> <p>Նստաշրջանի յուրաքանչյուր շաբաթվա առաջին օրը:</p> <p>Հայտը պետք է ուղարկել 4 շաբաթ առաջ</p>
<p>Բռնությամբ անհետացած անձանց իրավունքների կոմիտե</p> <p>ced@ohchr.org</p> <p>Յուրաքանչյուր նստաշրջանի համար կոմիտեն սահմանում է այլընտրանքային/ստվերային զեկույցի ներկայացման ժամկետները:</p> <p>Նստաշրջանների մասին տեղեկություն կարող եք ստանալ հետևյալ հղումով:</p>			<p>Սահմանված չէ:</p>	

Կազմակերպությունները, որոնք ցանկանում են մասնակցել որևէ Կոմիտեի նստաշրջանին պետք է առնվազն 2 շաբաթ առաջ հետևյալ [հայտաձևը](#) լրացված ուղարկեն Ms. Adele Quist at aquist@ohchr.org, նամակի պատճենը ուղարկելով նաև Քարտուղարություն համապատասխան Կոմիտեի էլեկտրոնային հասցեով: Հայտաձևի լրացման կարգը կարող եք գտնել հետևյալ [հղումով](#):

Կանանց նկատմամբ խտրականության վերացման և Մարդու իրավունքների կոմիտեի նստաշրջանին պետք է գրանցվել հետևյալ [հղումով](#):

Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի կայքէջում տեղակայված հետևյալ [շտեմաքանում](#) կարելի է գտնել տեղեկատվություն զեկույցների ներկայացման վերջնաժամկետների վերաբերյալ: Հայաստանի վերաբերյալ ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների զեկույցների քննարկման վերաբերյալ տեղեկատվությունը կարող եք գտնել հետևյալ [հղումով](#):

Այլընտրանքայի զեկույցներին ներկայացվող պահանջները և ներկայացման կարգը

Հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող այլընտրանքային զեկույցները պետք է ներառեն փաստերով հիմնավորված հավաստի և օբյեկտիվ տեղեկատվություն: Եթե տվյալ կազմակերպությունը տեղեկատվության առաջնային աղբյուր չէ, ապա Ձեկույցը պետք է նաև ներառի հղումներ առաջնային աղբյուրներին: Ձեկույցը պարտադրապես պետք է ներառի տեղեկություն այն ներկայացնող կազմակերպության/կազմակերպությունների վերաբերյալ, նշում այն մասին, թե արդյոք զեկույցը ներկայացվում է կոնֆիդենցիալ կերպով, թե ոչ: Ձեկույցը պետք է լինի հնարավորինս հակիրճ և թիրախավորված: Եթե Ձեկույցը չափազանց ծավալուն է, ցանկալի է ներկայացնել նաև հակիրճ ամփոփում: Որոշ մարմիններ սահմանում են զեկույցի առավելագույն ծավալ:

Ձեկույցները, որպես կանոն, ներկայացվում են տվյալ մարմնի աշխատանքային լեզուներից որևէ մեկով, սակայն առավել նախընտրելի է այն ներկայացնել անգլերեն լեզվով: Այն ներկայացվում է էլեկտրոնային կերպով, որոշ մարմինների աշխատանքային կանոններից ելնելով, եթե ներկայացնողը ցանկանում է, որպեսզի Կոմիտեի անդամներին տրամադրվի նաև Ձեկույցի թղթային տարբերակը, ապա այն պետք է ուղարկի նաև Կոմիտեի անդամների քանակին համապատասխան թղթային տարբերակով զեկույցները:

Կոմիտեները խրախուսում են հասարակական կազմակերպությունների կոալիցիաների կողմից ներկայացվող համատեղ զեկույցներ: Այլընտրանքային զեկույցների հետ համատեղ հասարակական կազմակերպությունները կարող են առաջարկություններ ներկայացնել նաև խնդիրների ցանկի վերաբերյալ, այսինքն այն հարցադրումների վերաբերյալ, որոնք Կոմիտեն պետք ուղղի պետությանը: Հարցադրումների ցանկի վերաբերյալ առաջարկությունների ներկայացման ընթացակարգի վրա տարածվում են նույն կանոնները, այլընտրանքային զեկույցի ներկայացման ընթացակարգի կանոնները, բացառությամբ եթե այլ բան նախատեսված չէ Կոմիտեի գործունեության կանոններով:

- *Կոմիտեում զեկույցի քննարկման ընթացքում*

Որպես կանոն հասարակական կազմակերպությունները կարող են ներկա գտնվել Կոմիտեում Կառավարության զեկույցի քննարկման ընթացքում, թեև չեն կարող միջամտել քննարկմանը: Կոմիտեների Ընթացակարգային կանոններով սահմանված է Կոմիտեների անդամների հետ հանդիպման, երկրում տվյալ ոլորտում մարդու իրավունքների վերաբերյալ բանավոր կերպով իրազեկելու հնարավորություն: Բանավոր քննարկումների հնարավորության վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն կարող էք գտնել վերը ներկայացված աղյուսակում: Միննույն ժամանակ, յուրաքանչյուր նստաշրջանի համար կոմիտեն սահմանում է հասարակական կազմակերպությունների հետ քննարկումների օր և ժամեր: Այս տեղեկությունը կարող էք գտնել նստաշրջանի էլեկտրոնային կայքէջում:

- *Եզրափակիչ դիտարկումների և հանձնարարականների ընդունում*

Եզրափակիչ դիտարկումների ընդունումից հետո հասարակական կազմակերպությունները պետք է հետևողական լինեն տվյալ դիտարկումների վերաբերյալ Հայաստանի բնակիչների իրազեկվածության բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև Պետության կողմից հանձնարարականների կատարման ուղղությամբ:

Մասնավորապես հասարակական կազմակերպությունները կարող են.

- Պահանջել Կառավարությունից կամ սեփական միջոցներով թարգմանել Եզրափակիչ դիտարկումները;

- Տարածել փաստաթուղթը;
- Իրականացնել դիտարկումներում տեղ գտած խնդիրների լուծման հանդեպ մշտադիտարկում;
- Մշտադիտարկումների հիման վրա պատրաստել զեկույցներ և այդ զեկույցները ուղարկել ՄԱԿ-ի մարմիններին և համապատասխան հարցերով հատուկ ընթացակարգերին:

Հասարակական կազմակերպությունները կարող են նաև միջանկյալ տեղեկատվություն ներկայացնել Կոմիտեներին նրանց կողմից ընդունված հանձնարարականների կատարման վերաբերյալ:

4. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների կողմից Ընդհանուր մեկնաբանությունների ընդունման գործընթացին

ՄԱԿ-ի մարդու իրավունքների պայմանագրային մարմինները մշակում և հրապարակում են համապատասխան պայմանագրի վերաբերյալ իրենց մեկնաբանությունները: Այդ փաստաթղթերը հրապարակվում են որպես Ընդհանուր մեկնաբանություններ, Ռասայական խտրականության դեմ և Կանանց հանդեպ խտրականության վերացման կողմից փաստաթղթերը կոչվում են Ընդհանուր հանձնարարականներ: Ընդհանուր մեկնաբանությունները պարունակում են ուղեցույց, թե ինչպես կիրարկվի Կոնվենցիան:

Ընդհանուր մեկնաբանությունների մշակման ընթացքում մարմինները նաև հավաքագրում են անդամ պետությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մոտեցումները մեկնաբանվող հարցի վերաբերյալ, կամ այնպիսի տեղեկատվությունը, որը կարող է զարգացնել Ընդհանուր մեկնաբանությունը:

Պայմանագրային մարմինները Ընդհանուր մեկնաբանությունները/Ընդհանուր հանձնարարականները կարող եք գտնել Ձեռնարկի առաջին բաժնում, համապատասխան Պայմանագրային մարմնի վերաբերյալ գլխում:

Հասարակական կազմակերպությունները կարող են նաև մասնակցել Ընդհանուր մեկնաբանությունների քննարկման և ընդունման նիստերին:

5. Քաղաքացիական հասարակությունը և անհատական բողոքների ներկայացումը

1. Անհատական բողոքների ներկայացման ձևաչափը, ընդհանուր նկարագրություն

Անձը, անհատը կարող է ներկայացնել անհատական գանգատ սույն ձեռնարկում ներկայացված ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններից որևէ մեկին, եթե գտնում է, որ խախտվել է համապատասխան պայմանագրով սահմանված իր իրավունքը (թե որ հարաբերություններն են կարող դիտարկվել տվյալ պայմանագրով սահմանված իրավունքների ներքո կարելի է պարզել նաև Կոնվենցիայի համապատասխան դրույթների վերաբերյալ ընդունված Ընդհանուր մեկնաբանություններով): Բողոքը կարող է ներկայացվել նաև երրորդ անձանց կողմից՝ սակայն խախտման գոհի գրավոր համաձայնությամբ, կամ առանց համաձայնության, եթե նա ի վիճակի չէ տալ նման համաձայնություն:

Գանգատը կարող է ներկայացվել միայն այն անդամ պետության դեմ, որը վավերացրել է Պայմանագրի համապատասխան Կամրնտի արձանագրությունը, կամ հայտարարել է Պայմանագրային մարմնի նման իրավասությունը ճանաչելու վերաբերյալ: Գանգատը կարող է ներկայացվել միայն ներպետական պաշտպանության արդյունավետ միջոցները սպառելուց հետո: Միննույն ժամանակ գանգատը անընդունելի կհամարվի, եթե այն քննվում է Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի դեպքում, նաև եթե քննվել է) միջազգային այլ մեխանիզմի շրջանակներում, օրինակ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կամ Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանի կամ ՄԱԿ-ի այլ պայմանագրային մարմինների կողմից:

Գանգատի քննությունը միջինը տևում է երկուսից երեք տարի:

Անհատական բողոքների մեխանիզմ ունեն ՄԱԿ-ի 7 պայմանագրային մարմինները

- Մարդու իրավունքների կոմիտեն
- Խոշտանգումների դեմ կոմիտեն
- Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն
- Խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեն
- Միգրանտ աշխատողների իրավունքների կոմիտեն
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն

- Բռնությամբ անհետացած անձանց իրավունքների կոմիտեն
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն

Հայաստանի Հանրապետության դեմ գանգատներ կարող են ներկայացվել միայն Մարդու իրավունքների կոմիտե և Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե:

Գանգատի ընդունելիության չափանիշներ

Բողոք կարող է ներկայացվել միայն ճանաչելի տուժողի անունից, Կոնվենցիայով ամրագրված որևէ իրավունքի խախտման վերաբերյալ: Տուժողը կարող է լինել միայն ֆիզիկական անձ: Հասարակական կազմակերպության կողմից կարող է բերվել բողոք միայն այդ դեպքում, եթե նա այդ անձի համաձայնությամբ ներկայացնում է նրա շահերը: Կարող են բերվել նաև խմբային բողոքներ, սակայն նշված դեպքում յուրաքանչյուր անձ պետք է համարվի խախտման տուժող: Ընդ որում, կարևոր չէ անձի քաղաքացիությունը, կամ այլ կարգավիճակը: Անանուն բողոքներ չեն ընդունվում: Սակայն անձը կարող է խնդրել, որպեսզի Կոմիտեի կողմից հրապարակվող փաստաթղթերում չնշվեն նրան նույնականացնող տվյալները: Անձի անունը և նույնականացնող տվյալները չեն կարող գաղտնի պահվել այն պետության Կառավարությունից, որի դեմ բերվել է բողոքը: Անձի անունից, առանց նրա գրավոր համաձայնության բողոքները կարող են ներկայացվել այն դեպքում, երբ հիմնավորվում է որ նա / տուժողը/ հնարավորություն չունի անձամբ ներկայացնել բողոքը՝ օրինակ մահացած է, կամ նա չունի որևէ կապ արտաքին աշխարհի հետ: Տվյալ դեպքում Կոմիտեն, ամենայն հավանականությամբ, կձանաչի գանգատ ներկայացնելու նրա մոտ հարազատների իրավունքը: Այն դեպքում երբ գանգատի քննության ընթացքում պարզվում է, որ տուժողները արդեն ի վիճակի են անձամբ գանգատ ներկայացնել, նրանք պետք է հստակ պնդեն ներկայացված գանգատը:

Հայաստանի Հանրապետության դեմ Մարդու իրավունքներ կոմիտե գանգատ կարող է ներկայացվել այն խախտումների վերաբերյալ որոնք տեղի են ունեցել 1993թ-ից հետո, կամ կրել/կրում են շարունակական բնույթ: Մարդու իրավունքների կոմիտեն նաև կարող է ընդունելի համարել բողոքներ այն փաստերի վերաբերյալ, որոնք թեև տեղի են ունեցել մինչ Դաշնագրի վավերացումը, սակայն, որոնց վերաբերյալ առկա է

այն ժամկետից հետո ընդունված դատարանի որոշում, որը վերահաստատել է տվյալ փաստերը: Հայաստանի Հանրապետության դեմ գանգատ կարող է ներկայացվել նաև գտնվելով այլ երկրի տարածքում, սակայն Հայաստանում տեղի ունեցած խախտումների վերաբերյալ: Հայաստանի դեմ բողոքներ կարող են ներկայացվել Հայաստանի փաստացի վերահսկողության տակ գտնվող տարածքում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ: Բողոքներ կարող են բերվել, եթե խախտումը կատարվել է պետության գործակալի կողմից (պետական մարմինների ծառայողներ, պետության անունից հանդես եկող անձ): Մինևույն ժամանակ, Կառավարությունը պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծի, որպեսզի նաև մասնավոր ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից չխախտվեն Դաշնագրով ամրագրված խախտումները, իսկ խախտման դեպքում պարտավոր է արդյունավետ միջոցներ ձեռնարկել իրավունքների պաշտպանության և վերականգնման ուղղությամբ:

Իրավունքի չարաշահում

Որոշ դեպքերում գանգատը կարող է ճանաչվել անընդունելի, եթե Կոմիտեն գտնի, որ բողոք բերող անձը չարաշահում է իր իրավունքը, նման դեպք կարող է տեղի ունենալ, եթե անձը շարունակաբար սուտ տեղեկություն է տրամադրում Կոմիտեին, կամ գանգատ է ներկայացնում խախտումից զգալի ժամանակ անց (կախված գանգատի բնույթից):

Գանգատի քննությունը

Գանգատը ընդունելի համարելուց հետո մեկնարկում է գանգատի ըստ էության քննությունը:

Գանգատը քննվում է փակ նիստի ընթացքում: Որպես կանոն գանգատը քննվում է գրավոր ընթացակարգով, թեև հնարավոր է նաև բանավոր վկայությունների լսում: Սովորաբար Կոմիտեն քննարկում է գանգատի ընդունելությունը և ըստ էության գանգատը մինևույն ժամանակ: Այսպես, այն պահից երբ Քարտուղարությունը ստանում է և գրանցում է գանգատը, այն փոխանցվում է անդամ-պետությանը՝ կառավարության մեկնաբանությունների համար: Մարդու իրավունքների կոմիտեին ներկայացված բողոքները, որոնք *prima facie* համապատասխանում են գանգատի չափանիշներին, հասցեագրվում են Կոմիտեի նոր հաղորդումների և միջանկյալ

միջոցների հարցերով հատուկ զեկուցողին, ով էլ որոշում է, թե արդյոք գործը պետք է գրանցվի և փոխանցվի անդամ-պետության կառավարությանը դիրքորոշման համար, թե ոչ: Կառավարության դիրքորոշման վերաբերյալ իր մեկնաբանությունները կարող է ներկայացնել նաև գանգատ ներկայացնող անձը: Կառավարության դիրքորոշումը և այդ դիրքորոշման վերաբերյալ գանգատ ներկայացնող անձի մեկնաբանությունները ստանալուն պես Կոմիտեն անցնում է գանգատի ընդունելիության և ըստ էության քննությանը: Որոշ դեպքերում Կոմիտեն կարող է որոշում կայացնել քննել գանգատի ընդունելիության հարցը առանձնացված կերպով: Այս դեպքում Անդամ-պետությունից գանգատի վերաբերյալ ըստ էության դիրքորոշում կպահանջվի միայն այն դեպքում, երբ Կոմիտեն այն համարի ընդունված:

Կոմիտեի որոշումները փոխանցվում են գանգատ ներկայացնող անձին և Պետությանը միաժամանակ: Գանգատի վերաբերյալ Կոմիտեի եզրափակիչ որոշումները նաև տեղադրվում են նաև ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի կայքէջում: Կանանց նկատմամբ բռնության վերացման կոմիտեի որոշումները պարունակում են նաև հանձնարարականներ այն մասին թե ինչ քայլեր պետք է ձեռնարկի պետությունը խախտումը վերացնելու նպատակով:

Ինչպես ներկայացնել գանգատը

Գանգատը պետք է ներկայացվի սահմանված նմուշի ձևաչափով: Գանգատը պետք է պարունակի հիմնական տեղեկատվություն գոհի վերաբերյալ՝ անուն, ազգություն, ծննդյան ամսաթիվ, հասցե, ինչպես նաև նշում այն պետության մասին, ում դեմ ներկայացված է գանգատը: Եթե գանգատը ներկայացված է այլ անձի անունից, ապա գանգատը պետք է ներառի գրավոր ապացույց գոհի համաձայնության մասին, կամ էլ հիմնավորում այն մասին, որ գոհը անձամբ չի կարող ներկայացնել գանգատ: Կոմիտեն պետք է տեղեկացվի անձնական տվյալների, ներառյալ կապի միջոցների ցանկացած փոփոխության վերաբերյալ: Հաջորդիվ անձը պետք է հիմնավորի բողոքի ընդունելիության չափանիշները, ներառյալ հիմնավորելով, որ այն սպառել է ներպետական պաշտպանության միջոցները: Իսկ եթե գոհը պնդում է, որ բացակայում են ներպետական արդյունավետ պաշտպանության միջոցներ, ապա պետք է հիմնավորի դրանց անարդյունավետությունը:

Հաջորդիվ պետք է ներկայացվի գանգատի հիմքում ընկած խնդիրը: Դիմումատուն պետք է ներկայացնի խնդրի վերաբերյալ ամբողջական և հավաստի տեղեկատվություն: Ցանկալի է, որպեսզի անձը նաև մատնանշի Պայմանագրի այն դրույթները, որոնք, իր կարծիքով, խախտվել են, ինչպես նաև իրավունքի վերականգնման այն միջոցները, որոնք անձը ցանկանում է ստանալ, այն դեպքում, եթե Կոմիտեն ճանաչի իրավունքի խախտումը:

Գանգատին պետք է կցվեն բոլոր վկայակոչված և վերաբերելի փաստաթղթերի կրկնօրինակները, ներառյալ վարչական և դատական մարմինների որոշումները: Այն դեպքում, երբ այս փաստաթղթերը ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներից որևէ մեկով չեն, ապա անհարժեշտ է ներկայացրել տվյալ փաստաթղթերի ամփոփումների թարգմանությունը:

Բողոքը չի կարող գերազանցել 50 էջը (բացառությամբ հավելվածները): Այն դեպքում, եթե բողոքը գերազանցում է 20 էջ, անհրաժեշտ է նաև ներկայացնել 5 էջ ամփոփում:

Գանգատը պետք է ներկայացվի ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներից որևէ մեկով՝ արաբերեն, չիներեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, իսպաներեն:

Անհրաժեշտության դեպքում Կոմիտեն կարող է դիմել գանգատ ներկայացնող անձին լրացուցիչ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով: Անձի հետ կապ կհաստատի ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը՝ ՄԱԿ-ի քարտուղարությունը:

Գանգատները ներկայացվում են հետևյալ հասցեով .

Petitions Team
Office of the United Nations High Commissioner for Human Rights
Palais des Nations
8–14, avenue de la Paix
CH–1211 Geneva 10 - Switzerland
Fax: +41 (0)22 917 90 22
E-mail: tb-petitions@ohchr.org


Անհատական բողոքների եզրափակիչ որոշումների կատարման հանդեպ վերահսկողություն

ՄԱԿ-ի պայմանագրային մարմինները դատական մարմիններ չեն և անհատական բողոքների վերաբերյալ նրանց որոշումները, եզրակացությունները չեն կրում ուղղակիորեն պարտադիր բնույթ:

Այնուամենայնիվ, ՄԱԿ-ի պայմանագրային մարմինը համապատասխան պայմանագրի դրույթները մեկնաբանող հեղինակավոր կառույց է: Ուստի կարևոր պայման է Պայմանագրային մարմինների մեկնաբանություններին համապատասխան պետության կողմից պայմանագրային պարտավորությունների կատարումը: Հասարակական կազմակերպությունները կարող են իրենց կողմից պետության պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվության շրջանակներում նաև հայտնել անհատական բողոքների քննության արդյունքում կայացված Կոմիտեի որոշումների կատարման վերաբերյալ:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի որոշումների կատարման վերաբերյալ անդամ-պետությունը պարտավոր է 6-ամյա ժամկետում գրավոր տեղեկատվություն տրամադրել այն քայլերի վերաբերյալ, որոնք նա ձեռնարկել է խախտումը վերացնելու ուղղությամբ: Կոմիտեն հետազայում ևս կարող է դիմել անդամ պետությանը լրացուցիչ տեղեկատվություն տրամադրել իրականացված քայլերի վերաբերյալ, այդ տեղեկատվությունը կարող է տրամադրվել նաև պարբերական դիտարկումների ընթացքում:

ՄԱԿ-ի ԴԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՆԱԿԱՐԳ



Մարդու իրավունքների խորհրդի գանգատների ընթացակարգ

Մարդու իրավունքների խորհրդի գանգատների ընթացակարգը հիմնվել է 2007 թ. : Ընթացակարգի նպատակն է Մարդու իրավունքների խորհրդի քննարկման առարկա դարձնել մարդու իրավունքների կոպիտ խախտումները: Ընթացակարգի շրջանակներում գանգատ կարող է ներկայացվել անհատների, խմբերի կամ հասարակական կազմակերպությունների կողմից, որոնք պնդում են, որ մարդու իրավունքների խախտումների գոհ են, կամ տիրապետում են մարդու իրավունքների խախտման վերաբերյալ անմիջական, վստահելի տեղեկության: Ընթացակարգի շրջանակներում դիմումները քննվում են խորհրդապահական կարգով, անդամ-պետության հետ համագործակցությունն ապահովելու նկատառումներից ելնելով:

Ներկայացված գանգատները նախնական կարգով ուսումնասիրվում են Հաղորդակցման աշխատանքային խմբի և ՄԱԿ-ի քարտուղարության կողմից, համատեղ: Նախնական ուսումնասիրության արդյունքների հիման վրա մերժվում են ակհայտորեն անհիմն և անանուն գանգատները: Եթե գանգատը չի մերժվում նախնական ուսումնասիրության արդյունքների հիման վրա, այն ուղարկվում է անդամ-պետությանը՝ դիրքորոշման համար:

Ընթացակարգի շրջանակներում կատարվող բոլոր քայլերի վերաբերյալ տեղեկացվում է թե գանգատ բերող կողմը, թե անդամ-պետությունը:

Գանգատի ընդունելիության չափանիշները

- Այն չպետք է կրի ակնհայտորեն քաղաքական բնույթ և խնդիրը պետք է բխի է ՄԱԿ-ի կանոնադրության, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և մարդու իրավունքների ոլորտի այլ գործիքների պահանջներից;
- Այն պետք է ներառի խախտման փաստերի նկարագրություն, ներառյալ մատնանշում, թե որ իրավունքներն են խախտվել;
- Այն չի կարող գրված լինել անհարգալից լեզվով: Թեև, այն դեպքում երբ նման բողոքը համապատասխանում է ընդունելիության մյուս չափորոշիչներին այն կարող է ընդունելի համարվել, անհարգալից լեզվով շարադրված հատվածը ջնջելուց հետո;
- Այն ներկայացված է անձի, անձանց խմբի կողմից, որոնք պնդում են, որ իրենք մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման գոհ են, կամ անձի կամ կազմակերպության կողմից, ովքեր, գործելով բարեխղճորեն,

ելնելով մարդու իրավունքների սկզբունքներից, և չհետապնդելով քաղաքական նպատակներ, պնդում են որ տիրապետում են խախտման վերաբերյալ անմիջական և վստահելի տեղեկության;

- Դեպքը չի քննարկվել ՄԱԿ-ի կամ տարածարջանային այլ մարմնի կողմից;
- Սպառվել են ներպետական պաշտպանության միջոցները, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորվում է, որ նման միջոցները անարդյունավետ են կամ անհիմն կերպով ձգձգում են գործը:
- Այն հիմնված չէ միայն ՁԼՄ միջոցներով տարածված տեղեկության վրա:

Գանգատները պետք է ներկայացվեն հետևյալ ձևաչափին համապատասխան:

Գանգատները պետք է ներկայացվեն հետևյալ հասցեով .

Complaint Procedure Unit
Human Rights Council Branch
Office of the United Nations High Commissioner for Human Rights
United Nations Office at Geneva
CH-1211 Geneva 10, Switzerland
Fax: (41 22) 917 90 11
E-mail: CP@ohchr.org

Անհատական գանգատների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարող եք գտնել նաև հետևյալ [հղումով](#):

6. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերի գործունեության շրջանակներում

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են կամ անհատապես կամ միավորվելով մասնակցել հատուկ ընթացակարգերի գործունեությանը:

Մասնավորապես նրանք կարող են .

- անհատական խախտումներ ներկայացնել հատուկ ընթացակարգերին;
- ներկայացնել տեղեկատվություն կամ հետազոտության արդյունքներ;
- աջակցել հատուկ ընթացակարգերին անդամ-պետություններ իրականացվող այցերի ընթացքում;

- ազգային կամ միջազգային մակարդակում տարածել, կամ ջատագովել և կիրարկել հատուկ ընթացակարգերի ուսումնասիրությունների արդյունքները;
- հրավիրել հատուկ ընթացակարգերի ներկայացուցիչների մասնակցել իրենց նախաձեռնություններին;
- անձամբ հանդիպել Հատուկ ընթացակարգերի ներկայացուցիչներին, կամ մասնակցել Հատուկ ընթացակարգերի տարեկան հանդիպմանը;
- առաջադրել հատուկ ընթացակարգերի հանձնակատարների համար թեկնածություններ:

Հատուկ ընթացակարգերի հանձնակատարների և աշխատանքային խմբերի ցանկը կարող են գտնել հետևյալ [հղումով](#):

Հատուկ ընթացակարգերի հանձնակատարներին դեպքերի վերաբերյալ ներկայացվող տեղեկատվությունը կարող է ներկայացվել անհատական բողոքներին հատուկ ձևաչափով:

Հատուկ ընթացակարգերին տեղեկատվություն կարող է ներկայացվել առցանց՝ հետևյալ [հղումով](#):

Հատուկ ընթացակարգերին տեղեկությունները պետք է ուղարկվեն հետևյալ հասցեով.

Special Procedures Division

Office of the United Nations High Commissioner for Human Rights

Palais des Nations

8–14, avenue de la Paix

CH–1211 Geneva 10 - Switzerland

Fax: +41 (0)22 917 90 06

E-mail: urgent-action@ohchr.org

Lined writing area with 30 horizontal lines.

